

3206

4.

Մայիս թ/ար

# ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

400

լ.

ՏԱՐԵՐԻ ԳԻԼԵՏԻ

1500

մատակարար

ԱՐՔԵԼԵԱՆՏ

ԱՐ ՀԱՅ ԽԵՂԻ

Բրատ. Բ. Ա Բուղովդ անի.

82

բ-42

ԹՎ Խ Ֆ Հ Ի Ա

Տպարան „ԵՊԵԼ ՏՈՒՐԱՆ“ Ընկ., Շահովական փող., 14.

1943

ԿՈՐԱԾ

ՍԱՐԱԾ

եթ

ՅՈՍԿԵ

ԿՈՎԱԾԻ

ԳԱՐՋԱԾ



23 JUN 2005

№ 1

ՀՐԵՏ. ԹՓ. Ը. ԲՈՒԺՈՒՊԵՐԵՐԻ

2 NOV 2009

108

823  
ԱՀ  
17-242

ԿՈՐԱԾ

ՍԱՐԸ



1. Կարաւանը. 2. Կօյօտները. 3. Պետրօի կասկածը. 4. Կօյօտների որոշումը. 5. Հընդիկներ. 6. Վշշան Օձը. 7. Յարձակումը բանակի վրայ. 8. Շրջակալ. 9. Պետրօն վրէժը լուծեց. 10. Կրուզտերը անմիաս մնաց. 11. Սնսպասելի թշնամին. 12. Սարի վրայ. 13. Ում էր վիճակւած. 14. Հարցի ողբերգական լուծումը. 15. Հրաշալի ոստիւն. 16. Գնդապետը. 17. Վերջին օրը. 18. Ազատութիւն. 19. Բանակ դառնալը. 20. Սանդակ Գերթը ուղէս:

3082

Թ ի ժ 1 ի ս  
Տպարան „ԱՌԵԼՏՈՒՐԱ“ ԸՆԿ., Բարօնսկայեա փող., 14.  
1913

24 JUL 2013

5206

## ՅԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐՔՆ

Չի կարելի վիճել այն բանի դէմ, որ  
մեր ժողովուրդը ընթերցանութեան համար  
շատ քիչ նիւթ ունի: Մենք կարծում ենք,  
որ այս տարւայ Ազգային Մեծ յորելեանը՝  
հայ տպագրութեան 400 և տառերի գիւտի  
1500-ամեայ տարեղարձները զարկ կը տան  
ինչպէս հայ հրատարակչական գործին, այս-  
պէս և ժողովրդի ընթերցախիրութեանը:

Այդ յորելեանը ժողովրդականութիւն  
կը ստանայ այն ժամանակ, երբ անդնդիատ  
և լայն տարածւի նրա վեհ գաղափարը. այս-  
պիսով զարկ կը տրվի ժողովրդի ինքնազոր-  
ծունէութեանը, որով ամեն մի անհատ իր  
սրբազն պարտքը կը համարի չը խնայել  
իր լուման յօգուտ զպրոցական ֆօնդի և  
լայն ընդհանուր լուսաւորութեան:

Չը կան ընթերցանութեան թեթև գրր-  
քոյկներ, որոնց մէջ խրախուսւում է և քա-  
ջալերւում ազնւութիւնն ու հերոաւթիւնը,  
անվեհերութիւնն ու մեծահոգութիւնը,  
մարդասիրութիւնն ու բարութիւնը, հնա-  
րագիտութիւնը և այլն:

Մենք ամենուրեք շըջապատւած ենք  
ամեն կերպ զինւած հարևաններով. մեր  
գոյութիւնը պահպանելու համար անհրա-  
գեշտ է, որ մենք ևս զինւենք գոնեա զի-  
տութեան լուսով:

Արդէն սկսել ենք սիստեմաբար հրա-  
տարակել մի շարք բնագիտութեան վերա-  
բերեալ գրքոյկներ, որոնց հետ լրացուցիչ  
դեր կարող են կատարել և մեր այս նոր  
գրքոյկները.—զանազան գեղարւեստական  
պատմածքներ, ճանապարհորդութիւններ,  
որսորդական նկարագրութիւններ և դէպի  
հողն ու մայր երկիրը գիտակցական սէր  
զարթեցնող ու նրանց նշանակութիւնը պար-  
զող նկարագրութիւններ, որոնց մէջ բնու-  
թեան թագաւոր մարդը իր ազնւութեամբ,  
վեհութեամբ և մտաւոր լայն կարողու-  
թեամբ ամենաալաւ օրինակը կը լինի ժողո-  
վրդի առաջադիմութեան համար:

ԲԺ. Ա. Բուլուղեան

1913 թ. ապրիլ 20.

Պետերբուրգ.

## ԿՈՐԱԾ ՍԱՐԸ

(Մայն Ռիոլից)

ԿՈՐԱԾ ԻԱՆ Հ

Երկարաձիգ կարաւանը դանդաղ շարժւում  
էր անապատի միջով\*): Տղամարդիկ առանձնապէս  
ձիւոր էին, իսկ կանայք ու երեխանները նստած  
էին սայլերին, որոնց լծւած էին ջորիներ։ Դա  
հանքահանների կարաւանն էր։ Այդ երկար շղթայի  
վերջին մասն էին կազմում ապրանքատար սայ-  
լերը, որոնք լցւած էին բաներով, մեքենաններով  
ու ամեն տեսակ գործիքներով՝ պեղումների հա-  
մար։

Տօթը ընկճել էր և մարդկանց, և անա-  
սուններին, իսկ օազիսի դեռ չէին հանդիպել։  
Առուները բոլորն էլ չորացել էին. ջուր ոչ մի  
տեղ չէր կարիլի գտնել։ Համբերատար կենդա-  
նիները հազիւ հաղ փոխում էին իրենց ոտքերը։  
Կարաւանի առաջից գնում էր մի ձիւոր,  
որը արտաքինով ասրբերւում էր միւսներից։

\*.) Հարաւային Ամերիկայում։

Նրա խոշոր, սև աչքերը նոյն թափով էին սուզ-  
ւում մարդկային հոգու խորքը, ինչ թափով որ  
զնում երկրի միջուկը: Այդ ջահէլ մեքսիկացին  
քաջ հմուտ էր ոսկի փնտրելում. ամենայն ճշ-  
տութեամբ նա գտնում էր ոսկու երակները գետ-  
նի մէջ: Այժմ նա գտել էր ոսկու տեղ Կորած  
Սարի վրայ, որ լնկած էր անապատի խորքում:

Այդ հակայ կարաւանը չէր պատկանում Պետ-  
րօ Վիցենտին, այսպէս էր ձիւորի անունը: Նա  
գուրկ լինելով՝ միջոցներից՝ իր գտած հանքա-  
տեղը ծախել էր Վիլլանե ու Տրեսիլիան հա-  
րուստ բանկային տանը մեծ գումարով: Այդ  
հարուստներից էստեան Վիլլանեը յիսուն տարե-  
կան գեղեցիկ, հպարտ դէմքով մեքսիկացի էր.  
Իսկ Ռոբերտ Տրեսիլիան բարձրահասակ, շէկ  
անգլիացի, որ կնոջ մահից յետոյ գնացել էր  
Մեքսիկա բախտ փորձելու:

Վիլլանեը և Տրեսիլիան թողել էին իրենց  
հին անօգուտ հանքերը և բոլոր բանւորներին  
ուղարկել նոր հանքերը, որ վերցրել էին Պետ-  
րօից. ահա այդաեղ էր տանում այժմ այս կա-  
րաւանը Պետրօն: Բանւորների մուգ գոյնից կա-  
րելի էր իմանալ, որ բոլորն էլ մեքսիկացի էին:  
Ժողովուրդն սկսեց անհանգստանալ, երբ նկա-  
տեց, որ ձիաներն ու ջորիները լեզուները հա-  
նած՝ ծանր հեռում են:

Վիլլանեը անհամբեր հարցրեց Պետրօին, թէ  
մւր է վերջապէս Կորած Սարը: Պետրօն վստահ  
պատասխանեց, որ մինչև արկի մայր մտնելը

նրանք տեղ կըհասնեն: Սարը երկում էր հեռ-  
ւից: Այս լուրը վայրկենապէս անցաւ անբողջ  
կարաւանով և Պետրօի խօսքերը շունչ տւեց ա-  
մենքին: Պետրօն նախ քան այդ, մի քանի անգամ  
եղել էր այդտեղ:



Անտանելի էր ճանապարհը երկու չքնաղ  
կանանց համար, որոնք նստած էին պատգարա-  
կի մէջ. երկու ուժեղ ջորի քաշում էին պատ-  
գարակը: Կանանցից երկուսն էլ նստած էին  
պատգարակից դուրս. մէկը կըլինէր 40 տարե-  
կան, միւսը բոլորովին ջահէլ էր. սրա խաղաղ  
դէմքը ժամանակով յահէլ էր և վարդագոյն շրթունքների  
տակից երկում էին նրա մարգարիտ ատամները:  
Գերթրուդը, այսպէս էին կանչում աղջկան,  
զրոյցի էր բռնւած այն խարտեաշ, պարթև երի-  
տասարդի հետ, որ նժոյգը տակին գնում էր  
պատգարակի կողքով: Դա Տրեսիլիանի որդի  
Հենրիկն էր:

Այն միտքը, թէ շուտով հանգիստ են առ-  
նելու, կենդանութիւն տւեց ամենքին:

ՄԵՐԴՈՅ

Կ Օ Ց Օ Ց Ն Ե Ր Ը

Մեքսիկացիների մաքով անգամ չէր անց-  
նում, թէ իրենցից երկու ժամւայ ճանապարհ հե-  
ռու գտնւում է հնդկացիների բանակը: Այդ այն  
կատաղի ցեղն էր, որ ատում էր մեքսիկացինե-  
րին: Նրանք թւով շատ ու շտա էին և իրենք

ձիաւոր, առանց սայլերի, առանց ծանր ապրանքի. չկար նրանց մէջ և ընտանիք: Նրանք հագել էին կտաւէ լայն շալւարներ, եղջերուի կաշուց կարած երկար կօշիկներ, էլ ուրիշ ոչինչ: Կոյօտները—այսպէս էր կոչւում այդ ցեղը—ունէին մի քանի առաջնորդներ, որոնցից զլխաւորի, որի անունն էր Վշշան Օձ (ամբողջ մարմինը ծածկւած էր դաղաւոր նկարներով), ամբողջ մարմի վրայ դաղել էին այսպիսի նկարներ—զգւելի դոգոշ գորտեր, վագր, օձ և այլն:

Այդ ցեղը յայտնի էր իր վայրագութեամբ, դրա համար նրանք կոչւում էին շակալներ կամ կօյօտներ: Սրանք ձեռնարկել էին այդ արշաւը յարձակւելու և թալանելու սպիտակների—եւրոպացիների—գիւղերը, որ ընկած էին Գորկազիտ գետի ափին: Գիշերը վրայ հասաւ, երբ նրանք դեռ անսպատռն էին. մի քանիսն առաջարկում էին շարունակել և հասնել կորած Սարն ու այստեղ հանգիստ առնել, միւսներն անհամաձայն էին, որովհետեւ այդ սարը դեռ հեռու էր, իսկ ձիաները, որ անցել էին երկար աարածութիւն, խիստ յոգնել էին: Այդպէս հսդիկները բանակ դրին անսպատռում, կրակ արին և սկսեցին կերակրի պատրաստութիւն տեսնել ու ուտել: Ապա վաթաթւելով բրդէ վերմակների մէջ, պառկեցին չոր գետնի վրայ և հանգիստ քնեցին:

### ԿՈՐԱԾ ՍԱՐՔ

Պետրօն չէր խաբում մեքսիկացիներին, երբ ասում էր, թէ կորած Սարը շատ մօտ է, որ հարկաւոր է լարել վերջին ոյժերը և շուտով նրանք կըլինեն ջրի մօտ, ծառերի ստւերների տակ: Կարաւանը մօտենում էր սարին, որը տարօրինակ ծև ունէր. նա լայնանում էր դէպի վեր, այնպէս որ գժւար էր պատկերացնել, թէ ինչպէս հնարաւոր էր բարձրանալ նրա թեք կողերով: Նրա երկարութիւնն էր 28 վերստ, լայնութիւն՝ 7, իսկ բարձրութիւնը 500 ոտք: Զորս կողմում փուած էր անսապատը խորթ ու տափարակ, որի մէջտեղից բարձրանում էր այդ սարը, մենակ ու մեկուսի. չկար ոչ մի բլուր, ոչ մի ձոր, այդ պատճառով էլ նա կոչւում էր Կորած Սար: Սարի հարաւային կողմում կար մի մեծ լիճ: Կարաւանը մօտենում էր լճին ուղիղ գծով: Երբ կենդանիները զգացին ջրի մօտիկութիւնը, արագ ընթացքով դիմեցին դէպի այն, քաշելով իրենց յետեկից սայլերն ու նրանց վրայ ցնցւող մարդկանց: Հնար չկար նրանց առաջն առնելու կամ կանգնեցնելու: Շուտով երևաց ջրի մի անհուն տարածութիւն, ափերին կանաչ ծառեր: Զիանքն ու ջորիները իսկոյն ջուրը մտան և կանգ առան միայն այն ժամանակ, երբ ջուրը հասել էր մինչև նրանց քթերը:

‘Իօն-էստեան Վիլամներ հին զինւոր էր, նա իր կեանքում մի քանի անգամ մասնակցել էր

հնդկական ցեղերի դէմ մղւած կոփւներին: Նա գիտէր, որ հնդիկները յաճախ գալիս էին կորած Սարը, դրա համար էլ առաջուց ուղարկել էր խուզարկուներ՝ տեսնելու, թէ չկա՞ր արդեօք որևէ վտանգ: Գնացողների մէջն էին Պետրօն և Հենրիկը: Հենրիկի ձին, կրուզադերը, արաբական մի սքանչելի, տոկուն նժոյգ էր, որին նա սիրում էր ընկերոջ նման: Մի զոյգ սկորակ աշքեր լի երկիւղով և հպարտութեամբ երկար դիտում էին երիտասարդին յետեկց. այդ Վիլանի աղջիկ Գերթրուդի աչքերն էին սիրահարւած Հենրիկին:

Խուզարկուներն ոչ մի կասկածելի բան չէին տեսել և շատ էին զարմացել, որ կարաւանն այդքան շուտ էր հասել ջրին:

### ՊԵՏՐՈՒ ԿԱՍԿԱԾԸ

Մարդ և անասուն յոկնած, ջարդւած էին. շուտով մարեցին երեկոյեան կրակները և ամենքը հանգիստ քուն մտան. ոչ ոք վտանգ չէր տեսել, դրա համար էլ հանգիստ քնեցին մինչև առաւօտ:

Ամենից շուտ վեր կացաւ Պետրօն, նա լաւ որսորդ էր, Հենրիկի հետ միասին գնացին սարը որսի, ի հարկէ շօկոլադ խմելուց յետոյ, որ առաւօտեան վաղ պատրաստել էին կանայք: Սար բարձրանալը խիստ դժւար էր. միայն մի ճա-

նապարհ էր գնում դէպի սարի գագաթը ցամաքած ձորակի միջով, բայց այդ ուղին էլ այնքան թեք էր, որ մեր որսորդները բարձրանում էին շատ դանդաղ, զգոյշ մագլցում էին ձորակի միջով, որի մէջտեղով հոսում էր առւակը: Ուրիշ ճանապարհ չկար: Բնութիւնը հողի այդ կոյտից անմատչելի մի բերդ էր կերտել:

Մի ժամանակ չափ դեռ չէին անցել, երբ երիտասարդները նկատեցին փոքրիկ կանաչ մարգագետին. նրա մէջտեղից ցայտում էր սառնորակ մի աղբիւր, որի զուլալ ջուրը կոտրեց նրանց ծարաւը: Այդտեղ նրանք տեսան թռչուններ, որ նման էին աքաղաղների. դրանք հնդկական աքաղաղներ էին: Պետրօն և Հենրիկը խփեցին նրանցից մի քանիսը, կախեցին բարձր ծառերից, որ շակալները չուտէին և նորից շարունակեցին բարձրանալ սարը:

Պետրօն մտատանջութեան մէջ էր. այդ նկատեց Հենրիկը և հարցրեց պատճառը: Բանից երկաց, որ Պետրօն երէկ երեկոյեան հեռու տարածութեան վրայ մուխ էր տեսել: Պարզ էր, որ բածութեան մարդիկ կային: Ենթադրել, թէ հնդկայնտեղ մարդիկ կային: Ենթադրել, թէ հնդկան որևէ խաղաղ ցեղ է, նա չէր կարող, որովհան կրակի ծուխը բարձրանում էր վայրի անահետև կրակի կողմից, ուր օպատները, այսինքն քաղաքակրթւած հնդիկները չեն գնում: Պետրօն երկիւղ էր կրում, թէ դրանք կատաղի կօյտները կըլինեն: Այդ ասելով նա բաց արեց իր կուրձը, ուր կօյտները դաղել էին մեռելի գլուխ,

Երբ նա գերի էր ընկել նրանց ձեռքը և որտեղից ազատել էր պատահական փախուստով։ Այդ վայրենիների կատաղի բնաւորութիւնը հընդկական միւս ցեղերի զարմանքն էր յարուցանում։ Եթէ Պետրօի երկիւղը հիմնաւոր լինէր, հանքահանների կարաւանին մեծ վատանգ էր ըսպանում։ Հենրիկը չէր կարողանում հաւատալ Պետրօին. նոյնիսկ զարմանում էր նրա երեակայութեան վրայ։ Սակայն Պետրօն մտածկոտ մաղլցում էր ժայռերը և երեկոյեան ծուխը չէր հեռանում նրա մտքից։

Անսպասելի նրանց առաջը դուրս եկաւ  
վայրի ոչխարի մի հօտ: Ոչխարներից մէկը,  
որ ամենից մեծն էր երևում, մօտեցաւ նրանց:  
Հենրիկը հրացանի ոտքը քաշեց և ոչխարը գե-  
տին գլորւեց: Երբ մօտեցան որսը վերցնելու,  
նրանից գարշահոտ էր փշում, որից զգւած նրանք  
հեռացան: Պետքօն մըթմըթաց Հենրիկի վրայ,  
որ սա իզուր կորցրեց մի գնդակ:

Մեծ համբերութեամբ բարձրանում էին երիտասարդ ուսուդները սարն ի վերև և մտադիր էին անցնել սարի միւս կողմը՝ ոտուգելու, թէ որքան հիմնաւոր էր Պետրօի երկիւղալի կանաչը կօյօտների նկատմամբ:

## ԿՈՅՏՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՐ

Սպիտակ ճանապարհորդները (եւրոպացի) ստքի ելան արշալոյմին, բայց կարմրամորթներն էլ

Քնած չէին: Նրանք սիրում էին թալանը կատարել գիշերով: Այս անգամ նրանք ուզում էին դեռ շողը չընկած՝ հասնել լճին: Նրանք ոտքի վրայ էին ծէցից առաջ: Ամենից առաջ սկսեցին ուտել, ինչ պատրաստել էին երեկոյեան. ուտում էին ագանաբար, այրում բերաններն ու ձեռքները, ապա ծխախոտ ծխում, որ շատ տարածւած էր հնդիկների մէջ, որից յետոյ միայն ճանապարհ ընկան:

Նրանք գնում էին դանդաղ, որ ըլ յոգեն  
ձիերը: Ծիծաղն ու խօսակցութիւնը շարունակ-  
ւում էր անընդհատ: Նրանք ուղիղ դիմում էին  
դիպի լիճը:

Նրանց ուշըլ գլաւեց թռչունների մի երամ,  
որ թռչում էր նրանց վրայով գէպի կորած Սա-  
րը: Դրանք ուղուցներ էին, որոնք պարզապէս  
զգացել էին խոշոր գէշի հոտը և կնում էին  
յօշոտելու այն: Հնդիկներին հետաքրքրում էր,  
թէ ինչ կարող էր լինել այդ. նրանք արագաց-  
րին քայլները և յանկարծ քարացած կանգ ա-  
ռան: Սարի հարաւային կողմից բարձրանում էր  
մի կարմիր սիւն: Վայրենիներն իսկոյն հասկա-  
ցան, որ ուրիշ ձանապարհորդներ կանխել էին  
նրանց. բայց ովքեր էին դրանք:

Ենթագրել, որ գրանք օտարներ էին. չէին  
կարող, որովհետև օտարները նստակեաց էին և  
իրենց գիւղերից չէին հեռանում: Պարզ էր, որ  
գրանք մեքսիկացիներ էին, որ փայլուն մետաղ  
էին փնտում նոյն խոլ հնդիկների երկրում:

Կօյօտնելը որոշեցին պատժել յանդուգն աշ-  
խարհակալներին:

Բայց ի՞նչպէս պիտի գործէին, չէին իմա-  
նում, որովհետև եթէ թշնամին զինւորական  
գունդ էր, պէտք է խիստ զգոյշ լինէին. հարկա-  
ւոր էր բաժանւել երկու մասի և սարի երկու  
կողմից շրջապատել թշնամուն. իսկ եթէ հան-  
քահանների կարաւան էր, կարելի էր գործել  
համարձակ և կտրուկ, չը կորցնել աւելորդ ժա-  
մանակ:

Սարի գագաթից կօյօտները տեսան հրացանի թեթև ծուխ, որ մարդկանց ներկայութիւնն էր ապացուցում։ Երկար չը վիճեցին հնդիկները, բաժանւեցին երկու խմբի, մէկն ուղղւեց դէպի աջ, միւսը ձախ, որ վրջապատեն սպիտակամորթների բանակը...

Իսկ վայրի ուրուրները շեշտակի դիմում  
էին դէպի սարը, հարուստ որսի նախազգացու-  
մով:

## ՀԱԴԻԿԱԲՐԵ

Երիտասարդ որսորդները դժւարութեամբ  
էին անցնում սարի միւս կողմը. խիս թփերը  
և հիւաւած խոտերը դժւարացնում էին ճանա-  
պարհը: Մի մղոն անցնելու համար մօա մի ժամ  
կորցրին: Վերջապէս դուրս եկան անտառի մա-  
ցառուտից և նրանց առաջ փուեց անվերջ ա-

ւազուտ անապատը: Իսկոյն նկատեցին դեղին սիւ-  
նը, որ մօտ տասը մղոն հեռաւորութիւն շարժ-  
էում էր դէպի իրենց կողմը:

Պետրոի դէմքը բոլորպվին լըջացաւ։ Յա  
պարզեց անփորձ Հենրիկին, որ սարսափելի թըշ-  
նամին շատ մօտ է։ Պետրօն մեղադրում էր իրեն  
այն բանի համար, որ առաւօտեան թոյլ էր տւել  
կանանց կրակ անել, և դրանով կօյօտների ու-  
շակրութիւնն իրենց վրայ դարձրել։ Այժմ Պետ-  
րօն ու Հենրիկը դիտում էին, թէ ի՞նչպէս փոշու-  
սիւնը բաժանեց երկու մասի։ Պետրօն հասկա-  
ցաւ, որ վայրենիներն ուզում են իրենց բանա-  
ցաւ, կը շըջապատել երկու կողմից և յանկարծակի-  
կը բերել։

բերելու ըովէն թանգ էր. պէտք էր արագ բանակ  
իջնել: Երիասասարդ ուսորդներն սկսեցին բանուկ  
կածանով ցած վազել, որպէսզի ժամանակին  
տեղ հասնեն և իմաց տան վոտանզի մասին: Շտա-  
պելուց նրանք, ի հարկէ, չը վերցրին ծառի վը-  
րայից խփած արագաղները: Թեք ապառաժո-  
տից ցած գալիս նրանք անընդհատ կանչում էին  
«Հնդիկները, հնդիկները»:

Այս ինչ բանակում մարդիկ անոնք զեւ  
լում էին անարարութեամբ. ոմանք ջուր էին  
ցանում չորացած սայլերին, միւսները դարսում  
էին իրերը. աղջկերք շոկոլադ էին եփում, իսկ  
եռեխաւը՝ խաղում լծի ափին:

երեխայք՝ խաղուս լսե առւ  
Պարոն վկլիխանեի և ամուսու համար մի  
մեծ վրան էին խփել, որտ կողքին փոքրիկ վը-

բաններ, մէկը Գերթըուղի, միւսը պարոն Տրեսիլեանի և նրա որդու համար: Այս պահին, երբ մեր որսորդները սարից ցած էին վազում, Վիլտանի ընտանիքը զբունում էր լճի կանաչ ափին, որտեղից լսեցին սարից հասնող բացականչութիւնները: Յուղեց ամբողջ բանակը:

Էստեան Վիլանիը և Տրիսիլեան երկուսն էլ շտապեցին գիմաւորելու Պետրօին և Հենրիկին: Հարցեր էին, որ աեղում էին Պետրօի զլլիին, և որը տարգեց վերահաս վտանգի մօտաւուս լինելը: Պետրօն անհրաժեշտ համարեց թողնել բոլոր կենդանիներին, մեքենաներն ու սայլերը բախտի կամքին, միայն իրենց սար բարձրանալը վտանգից ազատելու համար: Անհրաժեշտ էր շուտափոյթ վերցնել բանակը, որովհետ մի ժամկց յետոյ ամեն բան կորած կլինէր:

Պետրօն խօսում էր յուղւած ձայնով: Երիտասարդներից երկուսն էլ հազիւ շունչ էին քաշում և սարսափելի հեռում, այնքան վազ էին որ:

Դօն-Տրեսիլիան սարսափեց Պետրօի խօսքերից, նա չէր ուզում թողնել այդ ամբողջ կայքը, մեքենաները, ձիաներն ու ջորիները վայրենիներին աւար, սակայն Վիլանիը իբրև հինգին երկար չէր կարող տատանւել. նա հասկանում էր, որ ուրիշ ելք չը կայ: Պետրօն փորձած մարդ էր, գիտէր հնդիկների գործելու եղանակը, սովորութիւններն ու կեանքը. դրա համար էլ Վիլանիը խորհրդակցելով Տրեսիլիանի

հետ, որոշեցին ամեն բանում Ենթարկւել Պետրօի կարգադրութիւններին:

Պետրօն անմիջապէս գոչեց. «Բոլորը գէպի սարը»: Ակսւեց իրարանցումը: Վերցնելով իւրենց հետ ամենաանհրաժեշտ իրերը՝ մեքսիկացիների հոսանքը դիմեց սարը: Ճանապարհ սարցիների էր. քարերից, թմբերից, ծառերի արմատներից բռնելով և տեղ-տեղ չորեքթաթալով՝ բարձրանում էր մարդկային ամբոխը սարն ի վեր: Խնդիրապահանութեան բնազդը ոյժ էր տալիս ամենքին:

Ամենից առաջ անվտանգ վայրում տեղաւորեցին կանանց և երեխաններին: Ապա տղամարդիկներից շած իջան իրեղէնները բերելու: Աշդիկ նորից ցած իջան իրեղէնները բերելու: Աշատառում էին ազատել թշնամու ճանկերից այն խատում, ինչ հնարաւոր էր: Վիլանիը կարգամենը, ինչ հնարաւոր էր: Վիլանիը կարգամենըները, զրեց նախ տանել պատերազմական մթերքները, ապա ուտելեղէնը. նրան լուռ հնազանդեցին:

Շուտով դատարկւեց մեծ բանակը, ուր բացի մեքենաններից, սայլերից և տան կարաբացի մեքենաններից, ուրիշ ոչինչ չըմնաց: Եթէ Վշան Օձը սիքներից, ուրիշ ոչինչ չըմնաց: Եթէ Վշան Օձը և ընկերները իմանային, որ սպիտակները կըտանեն ամբողջ գոյքը, անշուշտ կըշտապէին արագ տեղ համանել:

Յուղիչ էր աեսարանը, երբ մեքսիկացիները բաժանում էին իրենց ձիերից, որոնց անչափ սիրում էին: Ամենից աւելի յուղուում, փոթորկում էր Պետրօն: Նրա ապագան այդ ճանապարհում էր Պետրօնից հաջողութիւնից էր կախւած. Եթէ հորդութեան յաջողութիւնից էր կախւած.

ՅՈՒՆ 26 1955

20821

ԽՍՀՄ ԳՐԱԴԱՐԱՆ  
7/31 1922  
ԽԱՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ

յաջողւէր էլ մեքսիկացիներին ազատւել կարմրա-  
մորթների ճիրաններից, յամենայն դէպս կօյօտ-  
ները կը ջարդէին և կը փչացնէին թանգարժէք մե-  
քենաները և թշնամիներին տածած ատելութիւ-  
նը բորբոքւում էր նրա սրտում:

Նա բաժանւեց իր ձիռւց սառն կերպով.  
այն ինչ Հենրիկ Տրեսիլիան երկար ժամանակ  
չէր կարողանում բաժանւել իր սիրելի կրուզա-  
դերից: Նա շոյում էր նրան վերջին անգամ: Ե-  
րիտասարդի աչքերում ակամայ խաղում էին  
արտասուքի կաթիլները: Ազնիւ կենդանին հաս-  
կանում էր տիրոջը և ցաւակցաբար խրխնջում:  
Հենրիկը անյագ համբուրում էր խելացի կենդա-  
նու մետաքսէ դունչը: Բայց բաժանւել անհրա-  
ժեշտ էր և Հենրիկը ձգեց իրեն դէպի կիրճը:  
Դեռ չէր անցել մի քանի քայլ, երբ լսւեց յե-  
տեղ ձիան ստքի արոփիւն, յետ նայելով՝ տե-  
սաւ կրուզադերին, որ աշխատում էր մագլե-  
լով բարձրանալ, բայց այդտեղ էլ ցած ընկաւ.  
կսկծալի խրխնջում էր նա, արտայայտելով իր  
ցաւն ու յուսահատութիւնը: —

Վ Շ Շ Ա Ն Օ Զ Բ

Երբ Հենրիկը ձորակից վեր բարձրացաւ,  
տեսաւ, որ հայրն ու Դոն-էստեանը աշխատում  
են: Նրանց կարգադրութեամբ բանւորները քա-  
րեր էին հաւաքում և կոյտեր կազմում, որպէս

զի կարմրամորթների յարձակման դէպքում գլո-  
րեն նրանց վրայ և այդ կերպ պաշտպանւեն:  
Սարն ինքն ըստ ինքեան մի գեղեցիկ բերդ էր  
ներկայացնում, այնպէս որ մեքսիկացիք այժմ  
իրենց տպահով էին գտում:

Վիլանեի կինն ու աղջիկը (Գերթըուգը)  
կանգնած էին շրջապատւած աղախիններով.  
Գերթըուգի դէմքը յուզմունք էր արտայայտում.  
Նա գիտէր, որ Հենրիկը յետ մնաց և միւսների  
հետ չէր բարձրացել, դրա համար նա անհան-  
գիտութիւն ունեցած էր. սակայն երիտասարդը շուտով մօտե-  
ցաւ նրան և վստահացրեց, որ վտանգն անցաւ,  
ոչնչից չպէտք է վախենալ:

Հենրիկը գիմեց Պետրօի մօտ, որին պ. Վիլ-  
լանեը յանձնել էր իր հեռաղիտակը և յանձնա-  
րարել սարից հետազօտել շրջապատող անապա-  
տը: Վիլանեն ու Հենրիկը պայմանաւորւեցին,  
որ սա որոշ նշաններով իմաց տայ թշնամու-  
շարժման և հետեանքի մասին. այսպէս, հրա-  
ցանի մէկ զարկը նշանակում էր, թէ թշնամին  
այլևս չի դիմում դէպի կորած Սարը. երկուոք՝  
թէ թշնամին մօտ է. երեքը՝ թէ զլանց ներ-  
կայութիւնից չըպէտք է վախենալ. չորսը՝ թէ  
այդ խումբը թշնամական ցեղիցն է, ուզում է  
բանակ ձգել:

Պետրօն և Հենրիկը շուտով հասան այն տե-  
ղը, որտեղից շատ յարմար էր դիտել անապատը:  
Նոքա իսկոյն տեսան հնդիկներին, որ շատ մօտ  
էին: Պետրօն հէնց հաստրակ աչքերով համոզ-

ւեց, որ այդ արիւնաբռու ցեղն էր, կօյօտները: Նա սարսափից ճիչ արձակեց և շտապ պատմեց Հենրիկին, որ եթէ իրենց մարդիկ ընկնեն այդ կարմրամորթների ձեռքը, սարսափելի մահ կը ստանան:

Հնդիկների մէջ նա ճանաչեց նրանց գլխաւորին, Վշշան Օձին, որի կրծքին դաղւած էր մեռելի նոյնպիսի գլուխ, ինչպիսին կար Պետրօի կրծքին: Հենրիկը վայրկենաբար չորս պայմանանշանով տեղեկութիւն տւեց թշնամու մասին: Պետրօն պատմեց նաև, որ այդ ցեղը ատում է մեքսիկացիներին և վրէժ կըլուծէ այն բանի համար, որ մի մեքսիկացի կապիտան դաւաճանաբար մորթել էր շատ կօյօտներ: Վշշան Օձը չէր մոռացել այդ և վրէժինդրութեան ըդգացմունքը եռում էր նրա մէջ: Հենրիկի հաշուով՝ հնդիկների թիւը հասնում էր 500-ի, Աւելորդ էր մտածել սարից փախչելու մասին, մնում էր պաշտպանւել այդ բնական բերդում: Յուզած երիտասարդները դարձան բանակ ընկերների մօտ: +

### ՅԱՐՉԱԿՈՒՄ ԲԱՆԱԿԻ ՎՐԱՅ

Որպէս նախկին զինւորական, Դօն-Էստեանը իր վրայ վերցրեց զինւորների հրամանատարութիւնը: Նա հրամայեց լցնել հրացանները, վասուդն ու գնդակները դնել չոր տեղ և տջալուրջ կերպով պահապաններ նշանակեց: Թշնամու շա-

տութիւնը չէր վախեցնում Վիլանկին, որովհետեւ ութսուն լաւ զինւած բանւորներ բռնել էին այդպիսի անմատչելի դիրք, այնպէս որ թշնամու բազմութիւնից հարկ չկար վախենալու:

Երբ Պետրօն իմաց տւեց, թէ կօյօտները մօտենում են, այդ լուրը չըշփոթեցրեց Վիլանկին, որը իսկական հերոսի նման հանգիստ էր: Նա իրեն շըջապատողներին ևս սառնասրտութիւն էր ներշնչում և բացատրեց, որ անհրաժեշտ է ծածկել թշնամուց, թէ սարի վրայ մարդ կայ: Մեքսիկացիք թաքնւած սարի խոռոշում՝ կարող էին դիտել մօտեցող հնդիկներին: Մրանք մօտենում էին երկու կողմից և կանգառան մեքսիկացիների թողած բանակից մի մղոն հեռու:

\* Դա խորամանկութիւն էր, որ արին հնդիկները: Նրանք ուզում էին օղակածե շըջապատով փակել մեքսիկացիներին, որովհետեւ կարծում էին, թէ սպիտակամորթները կուփ կըբռնւեն իրենց հետ հարթութեան վրայ:

Մեքսիկացիք տեսնում էին, թէ ինչպէս հնդիկների շարքերից գուրս եկան մի քանի հոգի խորհըրդակցելու: Հնդիկներին շփոթեցնում էին սայլերը: Նրանք չէին իմանում, թէ ովքեր են դրանց տէրերը, արդեօք խաղաղ հանքահաններ, թէ զինւորներ:

Այն խորհրդակցութիւնը, որ ունեցաւ հընդիկների գլխաւորը իր անմիջական օգնականների հետ, շուտով վերջացաւ այն որոշումով, թէ թշնամին զինւորականների բանակ չէ, որովհե-

տեսնում բանակը պաշտպանող  
պահապաններ, մանաւանդ այն, որ անսպուն-  
ներն արածում էին առանց պահապանի:

Այդ որոշումով հնդիկներն սկսեցին յարձա-  
կումը: Նրանք առաջ գալով չէին տեսնում ոչ մի  
սպիտակամորթ մարդու. այդ բացատրում էին  
նրանով, թէ սպիտակամորթները թագնւել են  
սայլերի յետեռում, իսկ անսպունների մեծ հօտը  
ծածկում էր նրանց վտանգաւոր թշնամու աշ-  
քից: Մեծ զգուշութեամբ մօտենում էին նրանք:

Զարմանքն ու միստիքական երկիւղը պա-  
տեց հնդիկներին, երբ սրանց հրացանաձգու-  
թիւններին, ուղղած թշնամու սայլերին ու վրան-  
ներին, ոչ մի ձայն չլսւեց, ոչ մի զարկ չպա-  
տասխանեց:

Բացարձակ լոռութիւն էր տիրում սպիտա-  
կամորթների բանակում:

### Շ Ր Ջ Ա Կ Ա Լ

Հնդիկները պատրաստ էին հաւատալու, թէ  
այդ բոլորը սպիտակների կողմից խարեբայու-  
թիւն է, բայց կայծակի արագութեամբ լոյս ըն-  
կաւ այն միտքը, թէ նրանք սարն են բարձրա-  
ցել: Նայում էին սարին և ոչ ոքի չէին տես-  
նում, որովհետև մեքսիկացիները խիստ թագ-  
նւել էին թշնամու աշքից: ~~XX~~

Կարմրամորթների գլխաւորը կատաղում,  
բարկանում էր մէկ իր վրայ, որ այդչափ դան-

դաղ շարժւեց, մէկ՝ սպիտակների, որ խարել  
էին նրա յոյսերը: Մնում էր այժմ միայն սարը  
պաշարել և ահազին ժամանակ կորցնել:

Շատ թէ քիչ մխիթարականն այն էր հըն-  
դիկների համար, որ մեծ քանակութեամբ անա-  
սուններ կարող էին ունենալ: Վշշան Օձը հրա-  
մայեց զինւորներին՝ թոկերով անսպուններ բրո-  
նել: Անսպունների հօտը ահաբեկւած և խրտնած  
ուսամորթներից՝ ճղեց նրանց շարքերը և դուրս  
եկաւ ազատ դաշտ:

Զիանների մէջ հնդիկները նկատել էին գե-  
ղեցիկ կրուզագերին: Երբ նրանք փախած անա-  
սուններին բերին բանակը, կրուզագերն այդտեղ  
չէր. այդ չքնաղ կենդանին ոչ թէ փախել, այլ  
թռել, ազատւել էր կարմրամորթների ձեռքից:

Հենրիկը վերևից դիտում էր իր սքանչելի  
ձիուն: Նա հպարտանում էր կրուզագերի անուշ-  
նով, որը ձի չէր, այլ թռչուն, հրեղէն արա-  
րած:

Կենդանիներին թոկերով բւնելուց յետոյ՝  
հնդիկներն սկսեցին մեքսիկացիների բանակը  
քրքրել. բայց իսկոյն հիսութափւեցին, որովհետև  
այնտեղ ոչ մի իրենց համար կարևոր բան չգտան:

Ամբողջ բանակը բոլորովին դատարկ էր:

Հնդիկները որոշեցին կատաղի վրէժ առնել  
սպիտակներից և վերջ ի վերջոյ տիրել պաշար-  
ւածների ամբողջ գոյքին:

Ապա նրանք բանակ դրին, խարոյկներ սար-  
քեցին և վճռեցին պաշարումը շարունակել մին-

ՀՅԱԿԱՐԻ

— 24 —

չե վերջը։ Այդ երեկոյեան նրանց ընթրիքն էր կազմում մի եղ բանակում գտել էին և մի տակառ սպիրտ։ այդ շատ ուրախացրեց նրանց, նրանք մեծ քէփ սարքեցին։ Վայրենի երգերն ու այլանդակ պարերը շարունակւեցին ամբողջ գիշերը։ Հնդիկների ուրախութիւնը գժութեան էր հասնում։

~~ՊԵՏՐՈՆ ՎՐԵԺԸ ԼՈՒՇԵՑ~~

Վայրենիների բանակում գաղարեցին պարերը, կրակները մարեցին և անկարգ ու անձոնի աղմուկ-աղաղակները հանդարտւեցին։ Վրայ հասաւ սև գիշերը, որի թանձը մթութեան մէջ ոչինչ չէր կարելի տեսնել։ Բայց չէին կորցրել իրենց զգուշութիւնը ոչ հնդիկները և ոչ մեքսիկացիք։ Չորակի մուտքի մօտ հնդիկները կանգնեցրել էին իրենց պահապանները։ Իսկ սարի գաղաթից սպիտակները հետևում էին սեւերի շարժումներին։

\* Վշշան Օձը՝ իր օգնականներով շրջապատւած գնաց վնարելու մեքսիկացիների հետքը։ Նրանք բոլորովին մօտեցան սարին։ Վշշան Օձը անհանդիսա էր մտածելով, որ պաշարումը կարող է յաջող չվերջանալ։ Նա երկիւղ էր կրում, մի գուցէ մեքսիկացիք արդէն սուրհանդակ են ուղարկել իրենց քաղաքը օգնութիւն բերելու։ այդ գէպքում հնդիկներին մեծ վտանգ էր սպառնում։ Միւս կողմից նա տեսնում էր, որ թըշ-

— 25 —

նամին իր հետ սարն էր տարել բոլոր պաշարը, հետևապէս կարող էր երկար ժամանակ պաշտպանւել։

Այդ մտքերով էր տարւած հնդիկների մեծը, երբ անսխալ գնդակը հասաւ նրա կրծքին և անշնչացած ընկաւ նա ուղեկցի գիրկը։

Այդ պահին Պետրօն և Հենրիկը պառկած էին գետնին և զգուշութեամբ գլուխները դուրս հանելով ժայռի յետեկց, դիտում էին, թէ ինչ էր կատարում ցածում։ Յանկարծ հէնց իրենց գէմ ու դէմ նրանք տեսան թշնամուն։ Այդ ժամանակ ծագող լուսինն այնքան պարզ էր լուսաւորում առարկաները, որ Պետրօն իսկոյն ճանաչեց իրեն տանջողին։ Նա այժմ կարող էր այն բոլոր չարագործութիւնների փոխարէն, որ արել էր Վշշան-Օձը, արժանի պատիժ տալ նրան, և հրացանի ծակող սուլոցը լսւեց անապատում։

Մեքսիկացիք իրար անցան, կարծելով, թէ թշնամին սկսեց յարձակումը։ Երբ էստեանն իմացաւ, որ Պետրօն սպանեց կարմրամորթների զվաւորին, այն յոյսն արտայայտեց, թէ այժմ իրենց դրութիւնը կըլաւանայ, որովհնտեւ հնդիկներն այդպիսի առաջնորդ շուտով չեն կարող գտննել։

Մեքսիկացիք մի քանի խոշոր քար գլուխին ձորի միջով, որ միակ ճանապարհն էր գէպի սարը։ սրանով նրանք ստուգում էին, թշնամին բարձրանում է ձորակով, թէ ոչ։ Յնապատից միայն անէծքի ձայներ էին հասնում սարը։

հնդիկները կատաղել էին. Երդւում էին նրանք իրենց մեծի վրէժն առնել, սարսափելի մահ հասցնելով թշնամուն. Ահարկու էին նրանց աղաղակները և տարածւում էին հեռու, հեռու անապատում:

### ԿՐՈՒԶԱԴԵՐԸ ԱՆՎՆՍՍ ՄՆԱՑ

Վշշան-Օձի խումբը բաղկացած էր քաջ ու անվեհեր հնդիկներից, որոնք կանգ չէին առնում պաշարման առաջ. Այժմ նրա մահից յետոյ նրանք որոշեցին աւելի յամառ առաջ տանել պաշարումը:

Թաղման ծէսը կատարելուց յետոյ, հնդիկները հաւաքեցին բոլոր բեռնակիր անասուններին, կապեցին միմեանց և քշեցին իրենց բանակը. Բաց թողին միայն այսպէս կոչւած վայրի ձիերին և եղջիւրաւոր կենդանիներին:

Մեքսիկացիք երբ համոզւեցին, որ հնդիկները չեն յարձակւում, սկսեցին բնակարաններ շինել: Սկսե ամպերը բարդ-բարդ կուտակւում էին երկնքում, պէտք էր պաշտպանուել կարկուտից: Աշխատանքը եռում էր. ոմանք ծառեր էին կտրատում ու տաշում, մի քանիսը ճիւղերից պատեր հիւսում, ոմանք էլ քարտաշութիւն անում: Կարճ ժամանակում, կարծես մոգական գաւաղանի հարւածով ճիւղերի ու տնակների մի շարք արդէն պատրաստ էր:

Կարկուտն սկսեց միայն միւս օրը երե-

կոյեան. յորդ անձրկ թափւեց, կարծես ջրհեղեղ լինէր: Սկ ամպերի հուժկու գոռգոռոցը և ուժեղ կայծակի շլացուցիչ փայլատակումները երկիրն էին դողացնում, սարսափ ձգում ամեն տեղ: Զորակը փրփրալից ջրվէժների անվերջ շարան էր դարձրել:

Բարեբախտաբար քամի չկար, դրա համար էլ մեքսիկացիների շէնքերը անվնաս մնացին: Գոյքը անվնաս պահելու համար ժրաջան բանւորները սկսեցին առանձին շէնքեր շինել:

Կարկտի ժամանակ հնդիկների մի մասը պահւել էր մեքսիկացիների առագաստաւոր սայլերի տակ, միւսը՝ այդտեղ չտեղաւորւելով՝ մըտել էր սարի ժայռերի տակ:

Մեքսիկացիների մօտ միայն մի տուն էր լուսաւորւած. այնտեղ էին Դօն-Էստեանը, Տրեսիլիան, Հենրիկը, Պետրօն, Գերթրուդը և ուսորիշները: Խօսում էին իրենց վիճակի մասին: Դօն-Էստեանը մեծ օգուտ էր համարում, որ Վշշան Օձը այդպէս շուտ սպանւեց. Նրա յաջորդը, Սկ-Ագուաւը, չէր փայլում հնդիկների մէջ և չունէր առանձին հեղինակութիւն, թէս պակաս կատաղի չէր: Խօսակցութիւնը երկար չշարունակւեց. մարդիկ խիստ յողնել էին. վերահաս գիշերը փակեց ամենքի աշքերը:

Միայն միւս առաւտեան դադարեց ամպերի գոռգոռոցը: Կորովի Հենրիկը, ինչպէս և անցեալ գիշերը, մնացել էր իր դիրքում, և երբ առաւտեան եղանակը պարզեց, նա յանկարծ

անապատում նկատեց իր սիրելի կրուզադերին,  
որ բաւական հեռու էր հնդկական բանակից. մեծ  
էր նրա ուրախութիւնը, երբ տեսաւ իր ձին ա-  
զատ՝ դաշտում արածելիս:

### ԱՆՍՊԱՍԵԼԻ ԹՇՆԱՄԻՆ

Հենրիկը այժմ ուրախ էր և յոյս ունէր  
պաշարման դրութիւնից ազատելուց յետոյ ման  
գալ և գտնել իր կրուզադերին: Նա տեսնում  
էր, որ կրուզադերը չէր մօտենում թշնամուն:  
Երիտասարդը հեռակա հրճում էր իր ձիով, երբ  
յանկարծ լսեց իւրայինների կողմից տարօրինակ  
աղաղակ և Գերթըուդի ձայնը, որ կանչում էր  
նրան:

Երբ Հենրիկը վերադարձաւ իւրայինների  
մօտ, տեսաւ իրենց բնակարանների մօտ երկու  
սոսկափ, մուգ-կարմրաւուն արջ, որ սարսափ  
էին ձգել մեքսիկացիների մէջ: Դրանք անապա-  
տի ամենակատաղի կենդանիներից էին. ունէին  
ահագին մարմին ու թաթերի վրայ սուր և ա-  
մուր ձանկեր. այդ գազանների ոյժը հէնց այդ  
ձանկերի մէջ է: Դրանք երբէք չեն վախենում  
թշնամուց, յարձակում են մեծ բանակների  
վրայ: Զարմանալի չէ, թէ ինչու այդպէս սար-  
սափեցին ու իրար անցան մեքսիկացիք այդ եր-  
կու գազանից:

Տարօրինակն այն էր, որ սկզբում դրանք  
չէին յարձակւել նրանց բնակարանների վրայ,

այլ կանգնած էին մնացել նրանց դիմաց հար-  
թութեան վրայ: Մեքսիկացիներից մէկը հրա-  
ցանը բացեց արուի վրայ, առանց իմաց տալու  
այդ մասին Պետրօին: Այդ բաւական էր, որ  
գրգուած գազանը յարձակւէր բնակարանների  
վրայ: Էգն էլ հետեւեց նրան և իր թաթի հար-  
ւածով գետին խփեց մի փոքրիկ երեխայի: Այս-  
տեղ մեքսիկացիք ամեն կողմից վրայ վազեցին և  
տասը հարւածով սպանեցին էգին: Արուն դիմեց  
Վիլլանեի վրանը: Մուտքի մօտ կանգնած էին  
Պետրօն, Հենրիկը—որ եկել էր պաշտպանելու  
սիրած աղջկան—Դօն-Էստեանը և Հենրիկի հայ-  
ըը: Ամենից առաջ հրացան արձակեց Պետրօն,  
և երբ արջը լիզում էր վերքը, միւսները նշան  
արին նրա ձախ կողին: Վտանգն անցաւ. ան-  
տափ պատուհասը անշնչացած գլորւեց գետին:

Երբ անսպասելի վտանգից աղատւած՝ քիչ  
հանգստացան, Հենրիկը կրկին դարձաւ իր գիր-  
քը, դիտելու կրուզադերին: Խելօր կենդանին հան-  
գիստ արածում էր կատաղի հեղեղատի ավին,  
որ առաջացել էր յորդ անձրևից: Հենրիկը սար-  
սափով նկատեց, որ մի քանի հնդիկներ մօտե-  
նում են կրուզադերին, որը նրանց ուշք չէր դարձ-  
նում: Հենրիկի սիրան ուժեղ սկսեց բարախել:  
Բայց կրուզադերը, որ մինչև այդ թողել էր  
թշնամուն մօտենալ իրան, յանկարծ մի ահագին  
ցատկում գործեց և իրեն տւեց հեղեղատի ա-  
լիքներին. չանցաւ մի րոպէ, նա արգէն միւս

30

ամիկն էր. որտեղից սլացաւ դէպի մօտակայ անտառն ու ծածկւեց թշնամու աչքից:

Հնդիկները՝ խաբւած հրեղն ձիուց՝ կորիգլուխ դարձան ընկերների մօտ. Հենրիկը և զարմանում, և հպարտանում էր իր անվախ ու խելօք ընկերոջ անունով:

### ԿԵԱՆՔԸ ԿՈՐԱԾ ՍԱՐԻ ՎՐԱՅ

Կորած Սարի վրայ մեքսիկացիների կեանքն անցնում էր բաւական խաղաղ. Թշնամիներն անընդհատ դիտում և հետեւում էին միմեանց շարժումների:

Հնդիկները յաճախակի շրջում էին սարի շորս կողմը: Պետրոն այդ բացատրում էր նրանով, թէ հնդիկները կասկածում են, որ բացի ձորակից սարի մի այլ կողմում ևս կարող է ճանապարհ լինել, որտեղից մեքսիկացիք կարող էին ծածուկ ցած իջնել և փախչել թշնամու ձեռքից:

Մի անդամ Պետրօն և Հենրիկը նկատեցին երկու հնդիկի, որ բանակից դուրս գալով արշաւեցին սարի կողմը, պարզ է, դիտելու նպատակով: Նրանք համբերեցին, մինչև այդ երկու հնդիկը բոլորովին մօտեցան սարին, վստահ, որ գնդակը կը տեսնի իր գործը, Պետրօն և Հենրիկը, որպէս անվլէալ նշանաձիգ, նրանց գետին գլորեցին հըրացանի մի-մի զարկով: Այդ դէպիցից յետոյ այլև խուզարկու խմբեր գուրս չէին գալիս հնդկական

— 31 —

բանակից. միայն ձորակի մուտքն էր բռնւած պահապաններով:

Մեքսիկացիք յաճախ գնում էին որսի. ձեռքից բաց չէին թողնում նաև մանր որսերը, նապաստակ և այլ փոքր կենդանիներ: Պետրօն ու Հենրիկն էին նրանց գլխաւոր որսորդները:

Էստեան Վիլաներ շատ էր երկիւղ կրում, որ մօտակայքում կարող են մուգ—կարմրաւուն արջեր լինել: Առաջին դէպի բարեյաջող վախճանը հազւագիւտ, բախտաւոր պատահականութիւն էր. այդ կենդանիների վտանգը շատ մեծ էր:

Մի անգամ որսի գնալիս Դօն-Էստեանն ընարեց ամենախիտ ու խուլ տեղերը, ուր փընտրում էր գաղանների որջեր: Յիրաւի, նրա երկիւղն անհիմն չէր: Անտառի խորքում նրանք հանդիպեցին երկու արջի, որ դուրս էին գալիս որջեց: Պետրօն խորհուրդ չէր տալիս հեռւից հրացան արձակել և ինսպրում էր բոլորին ծառ բարձրանալ ու մենակ իրենց թողնել գործ ունենալ այդ գաղանների հետ:

Այս տեղը, ուր գտնւում էին որսորդները, մի քանի սամէէն հեռու էր թեք քարափից, որ իջնում էր անապատը, իսկ քարափի վրայ բարձրանում էր խիտ ճղներով մի հսկայ ծառ: Պետրօն համարձակ մօտենում էր արջին, քարեր ձկում զարմացած գաղաններին և աղմկում: Զայրացնելով գաղաններին՝ նա հրացանի մի զարկով վիրաւորեց նրանցից մէկին: Երկու գա-

զաններն էլ յարձակւեցին Պետրօի վրայ, որը  
սլաքի արագութեամբ թռաւ դէպի քարափը,  
բարձրացաւ ծառը, իսկ գազանները ցած գլոր-  
ւեցին՝ սարսափելի ձայներ արձակելով:

Մեծ էր որսորդների զարմանքը, երբ տե-  
սան, որ այդ վիթխարի գազանները չվսասւեցին,  
այլ սահելով ցած, դիմեցին դէպի հնդիկների  
բանակը, նախազգալով, որ այնտեղ կարող են  
վրէժ լուծել մարդկանցից իրենց զրկանքի հա-  
մար:

### Ո՞ԻՄ ԷՐ ՎԻՃԱԿԻԱԾ

Ժամանակն անցնում էր. իսկ մեքսիկացիք  
դեռ մնում էին նոյն պաշարւած դրութեան մէջ.  
Հկար ազատւելու մի յոյս, Դօն-էստեանը նայե-  
լով կնոջն, աղջկան՝ խիստ տիրում էր. արդեօք  
Բնչ էր սպասում դրանց այստեղ: Նա երկիւղ  
էր կրում, թէ բանուրները, որ սովոր էին մըշ-  
տական աշխատանքի, կարող էին վերջը վատ  
վարւել: Նա վախենում էր, թէ այդ մարդիկ, որ  
իրենց և իրենց ընտանիքների կեանքը վստա-  
նացել էին նրան, կարող էին կասկածել, որ նա  
անկարող է և անընդունակ՝ ազատելու իրենց  
այդ դրութիւնից:

Նա իր այդ սե մտքերը յայտնում էր Պետ-  
րօին, այդ ամեն ինչ զիտող ու հնարագէտ մար-  
դունք Երիտասարդ մեքսիկացին խփում էր ձեռ-  
քը ճակատին և պատասխանում, թէ նա իր

գլուխը շարունակ կոտրում է այդ հարցի վրայ,   
թէ ինչպէս ազատւել: Նա չէր կարողանում նե-  
րել իրեն այն սխալը, որ ժամանակին չմտա-  
ծեց սուհանդակ ուղարկել Արիսպ քաղաքը տե-  
ղեկութիւն տալու իրենց դրութեան մասին և  
օգնութիւն բերելու:

Առայժմ Վիլանկն ու Պետրօն որոշեցին սա-  
րի ամենաքարձր տեղում տնկել իրենց ազգային  
դրօշակը, որպէսզի հայրենակից ճանապարհորդ-  
ները կարողանային աեսնել և օգնութեան գալ:  
Պետրօն ենթադրում էր, թէ Արիսպում լուր  
չստանալով կարաւանի մասին, պէտք է կաս-  
կած առաջ եկած լինէր անապատում կատար-  
ւած դէպքի մասին: Այդ օրւանից ամէն մի ճա-  
նապարհորդ, որ անցնելու էր սարի հարաւային  
կողմից, պէտք է նկատէր ծածանող դրօշակը:

Կասկածելով բանուրների բարոյականի  
վրայ, Դօն-էստեանը ուզում էր յաճախ ան-  
հանգիստ անել պաշարող թշնամուն, բայց  
այդ դժւար էր և վտանգաւոր: Հենրիկ Տրեսիլ-  
լիանը պնդում էր շուտշուտ յարձակումներ  
գործել թշնամուն յոզնեցնելու նպատակով: բայց  
Պետրօն գլուխը թափ էր տալիս. նա գտնում էր,  
որ մեծ անխոնեմութիւն կըլինէր երկու մասի  
բաժանւել և ցած իջնել դաշտ, ուր կարող էին,  
քանի որ ձիեր չունէին, շրջապատւել վայրենինե-  
րով: Դօն-էստեանը համաձայնում էր նրա հետ:  
Մնում էր մտածել՝ ուրիշ միջոցներով ոչնչաց-  
նելու թշնամուն:

Դեռատի Հենրիկը վառւում էր կարմրաշմորթներին պատժելու տենչով, բայց Պետրօն խոհեմաքար զսպում էր նրա կիրքը։ Մեքսիկացիների մէջ կար մի ինժինէր, որն սկսեց թընդանօթներ ձուլել, պատրաստել։ Շրջակայքը գիտելիս, նա գտաւ երկաթի հարուստ հանքեր. բանւորների մէջ դարբիններ էլ ճարւեցին և նրա հմուտ ղեկավարութեամբ գործն յաջող առաջ տարան. այդ բանը կենդանութիւն տւաւ պաշարւածներին և այն յոյսն առաջ բերեց, թէ այդ թնդանօթներով հնար կունենան ազատւելու։

Մի անգամ առաւօտեան մեքսիկացիների ուշը գրաւեց հնդիկների բանակը։ Այդ վայրկեանին ուրախ աղաղակներով դիմաւորում էին իրենց օգնութեան եկող մօտ 200 ընկեր զինուորներին։

Այժմ պարզ էր, որ հնդիկների նոր առաջնորդը, Սկ-Ագուաւը, չի թողնում պաշարումը։ Մեքսիկացիք տիրեցին, դրութիւնը ծանրանում էր։

Պետրօն հանգստացնում էր ամենքին, նա ենթագրում էր, որ նոր եկող խումբը շուտով կը հեռանայ. նա այսպէս էր բացատրում. կօյօները իշու նման յամառ են, նրանք ճանապարհորդութիւն են սկսել դէպի Գորկազիտի ափերը, այժմ կանգ առնելով այստեղ, կանչել են նոր խումբ, որպէսզի կարողանան իրենց նապատակը կատարել։ Պետրօն ցաւում էր այն սպի-

տակամորթների համար, որոնք ենթարկւելու էին այդ արիւնաբրու գայլերի յարձակումներին։ Հաւաքւելով փոքրիկ շրջանում Պօն-Էստեւանն յայտնեց, որ որսը այժմ քանի գնում քչանում է և երկիւղ կայ մօտալուտ սովի։ Այդ լուրը անհանգստացըրեց ամենքին։ Վերջապէս Պետրօն ասաց հանգարտ ձայնով. թէ անհրաժեշտ է ուղղել հին սխալը, փրանցից մէկը պէտք է զգուշութեամբ ցած իջնի և ծածուկ հասնի Արիսպ քաղաքը, որից միայն կարող է օգնութիւն գալ։

Պետրօն առաջարկեց, որ ինքը գնայ. սակայն բոլորը միաձայն հակառակեցին, որովհետեւ նա շատ հարկաւոր էր այդտեղ։ Այն ժամանակ վեր կացաւ Հենրիկը և հաստատուն ու վճռաբար առաջարկեց իրեն ուղարկել։ Գերթրուդի դէմքը շառագունեց, նա վախենում էր, որ կընդունեն նրա առաջարկը։ Բայց Պօն-Էստեւան մերժեց այդ առաջարկը։

Որոշեցին վիճակ ձգել այն մարդկանց միջև, որոնք գիտէին անսպասար և չէին կարող ճանապարհը կորցնել։ Ոչ ոք չէր աշխատում խուսափել այդ վասնգաւոր յանձնարարութիւնից, վիճակն ընկաւ մի ջորապանի և մի եղնարածի. երկուսն էլ քաջ, արկածախնդիր մարդէին։

Մինչ այդ Պետրօնի ենթադրութիւնն իրականացաւ. հնդիկներին օգնութեան եկած երէկ-

~~ւայ խումբը թողեց ընկերներին և հեռացաւ դէ-  
սլի Գորկապիդի ափը:~~

**ՀԱՐՑԻ ՈՂԲԵՐԳՎԱԿԱՆ ՀՈՒԾՈՒՄԸ**

Դօն-Հստեանը անհանգիստ էր և կամկա-  
ծում էր գործի յաջող ելքին. նա լաւ էր համա-  
րում, որ ինքը գնայ և իւրայինները վտանգի-  
չենթարկւեն: Պետրօն ուզում էր աւելի մութ-  
գիշեր, բայց դժբախտաբար համաստեղութիւն-  
ներն սկսեցին աւելի պայծառ փայլել և մեք-  
սիկացիք պարզ տեսնում էին հսդիկ պահապան-  
ներին ձորակի մուտքի մօտ: Կարելի էր սպա-  
սել հետեւեալ գիշերւան, բայց զինւած խիզախ-  
երիասասարդները չէին ուզում համբերել:

Պետքօն յոյսը դրել էր մառախուղը վլայ,  
որի ժամանակ հեշտ էր ծածկւել թշնամու աչ-  
քից, Յիրաւի լճի վրայից գորոշվի էր բարձրա-  
նում, որ շուտով ծածկեց հարթութիւնը: Մօ-  
տենում էր հանդիսաւոր ըոպիչն: Դօն-Էստեանը  
գորովալից՝ ճանապարհ դրեց Բարակին ու Ան-  
գումանին. «Գնացէք, Աստւած ձեզ հետ», ա-  
սաց նա «մնաս բարով»-ի ըոպիչն:

սայ սա զառա բար է ու ի մասն է առաջ առանց աղմուկի ժայռից  
Երիտասարդները առանց աղմուկի ժայռից  
յած սահելով անյայտացան մառախուղի մէջ:  
Տասնեակ կարեկցող աչքեր հետևում էին նրանց:  
Անցաւ մի ժամ, չլուեց ոչ մի ձայն: Մեքու-  
կացիք շունչները քաշած սպասում էին: Քիչ-քիչ  
յուսագրուում էին յաջող ելքի վրայ:

Բայց յանկարծ ձորակից ձայնել հասան և  
լուեցին հրացանի պայթիւններ։ Երիտասարդնե-  
րին ըռնել էին հնգեկները, որոնք կատւի նման  
մթութեան մէջ անգամ լաւ էին տեսնում։ Մեք-  
սիկացիք անկարող էին օգնութեան համար ըն-  
կերներին։ Նրանց տիբութեան ու զայրոյթին  
սահման չկար, երբ լուսաբացին անսապատի մէջ  
տեսան մի սիւն, որին կապել էին Անգումանին։

Մի խումբ հսդիկներ կանգնած Անդումանի  
գիմաց մի համազարկով վերջ տվին նրա կեան-  
քին: Բարակն էլ նոյն վախճանն ունեցաւ: Բայց  
նրանք իրենց կեանքը թանգ ծախեցին. նոյն  
առաւօտեան հսդիկները թաղեցին իրենց ընկեր-  
ներից տասնընգին, որ ընկել էին այդ երկու  
մեքուիկացու գնդակներից:

ՀՐԱՄԱՆԻ ՈՍՏԻՒՆ

Մեքսիկացիների յոյսը սառեց. թախիծը  
տիրեց ամենքին։ Պէտք էր յուսադրել լաւ տրա-  
մադրութիւն առաջ բերել:

Այստեղ դարձեալ Պետրօն ցոյց տւեց իր  
շնորհքը. նա յայտնեց, որ ոչ ոք այլևս չի մեռ-  
նելու կարմրամորթների անհծւած ձեռքով. Եթէ  
անխուսափելի է մահը, նրանք կըպայթեցնեն և  
իրենց, և թշնամուն: Վառօդ շատ ունէին. նրանք  
կըփորեն խանդակներ, կըցնեն վառօդով ու  
պատրոյգները դուրս կըթողնեն, թշնամուն խա-

բելով մօտ կըբերեն և կըպայթեցնեն խանդակ-  
ները:

Պետրօի խօսքերը սիրտ տւին լքեալներին  
ու յուսահատւածներին: Դօն-էստեանը որոշեց  
օգնւել ժողովրդի բարձրացած տրամադրութիւ-  
նից, տանել. յոյս ունէր խոշոր որս գտնել, որ  
հնարաւար կըդարձնէր դիմադրութեան շարու-  
նակութիւնը:

Մեքսիկացիք, որ սովորել էին մեռնելու  
մտքին, այլևս չէին մտածում այդ մասին: Միւս  
օրը լուսաբացին բոլորը գնացի որսի, բացի  
պահապաններից: Մեծ որս ճարեցին—գայլեր,  
շաքարներ և այլն: Յանկարծ էստեանը, Պետրօն  
և ինժինէրը նկատեցին մի գեղեցիկ վայրի այծ:  
Հալածւած որսորդներից, կենդանին սլացաւ դէ-  
պի անդունդը, որ իջնում էր անառատ՝ հնդիկ-  
ների բանակի հակառակ կողմը: Վայրկենաբար  
կանդ առնելով նրա ծայրին, այծը անսպասելի  
մի թոփչք գործեց դէպի անդունդը: Որսորդնե-  
րը շտապեցին դէպի անդունդի ծայրը, տեսնե-  
լու թէ ինչ եղաւ այծը:

Պետրօն մտածում էր, թէ ինչու կենդա-  
նին կանդ առաւ, կարծես չափում էր անդուն-  
դի բարձրութիւնն ու իր թոփչքը: Անդունդի  
բարձրութիւնը կըլինէր մօտ 500 ոտք: Եւ ինչ  
տեսան նրանք. այծը փախչում էր դաշտում  
սլաքի արագութեամբ: Թոփչքը յաջող էր և կեն-  
դանին ազատւեց:

Մի աննկատ ժպիտ անցաւ Պետրօի դէմ-

քով: Երբ լնկերները զարմացած յետ գնացին  
քարափից, նա պառկեց գետնին, կախւեց քա-  
րափից և ուշի ուշով դիտում էր ժայռի բոլոր  
խոռոչները: Ապա վերադարձաւ ընկերների մօտ:

Երեկոյ էր, երբ Պետրօն կնաց Դօն էստե-  
ւանի մօտ, այնտեղ գտաւ և յուզւած չենըրիկին,  
որը տրանջում էր իրենց դանդաղկոտութեան  
վրայ: Պետրօի ներս մտնելով խօսակցութիւնը  
դադարեց: ~~XX~~

Պետրօն յայտնեց ներկայ գտնւողներին, թէ  
ազատութեան ճանապարհը գտել է: Հարկաւոր  
է գնալ Արխապ քաղաքը սարի միւս կողմից, որ-  
տեղից այծն էր թուել: Այդ ծրագիրը սարսա-  
փեցրեցը ամենքին: 500 ոտք բարձրութիւնը  
վախեցնում էր ամենքին:

Պետրօն ինքը յանձն էր առնում գնալու.  
մնում էր միայն երկար պարան գտնելը, որ հար-  
կաւոր էր նրան: Նա գիտէր, որ այդ ճանա-  
պարհը նոյնպէս վտանգաւոր էր, բայց յոյս ու-  
նէր Աստուծոյ օգնութեամբ յաջող ելքի յան-  
գել:

Շըջակայքը դիտելիս Պետրօն հեռուում նկա-  
տեց մի սկ կէտ, որը հետզհետէ մօտենում ու  
մեծանում էր, դա կըուզադերն էր: Յանկարծ  
ձայն տւեց չենըրիկը և դրականապէս յայտնեց,  
որ ինքն է գնալու այժմ, որոհվետե ոչ ոք այն-  
քան հիմք չունէր յաջողութեան, որքան նա:

Կըուզադերը գիտէր չենըրիկի ազգանշանը և

անպայման կըդար նրան օգնութեան։ Որոշւեց հէնց այդ գիշերը ճանապարհ ընկնել։

Պետրօի ծրագիրը իրականացաւ բոլորովին այլ կերպ. բանւորներից ոմանք բերին հետևեալ լուրը։ Երբ նրանք ճանապարհ էին շինում ժայռից ցած իջնելու որսի համար, գլորել էին մի խողոք քար, որի տակ բացւել էր մի հոր։ Ինձինէրը պարանով ցած էր իջել այդ հորը, ուր պատերը քննելիս տեսել էր, որ մի պատը խստ բարակ է. քանդել էր տւել այդ պատը, որի առաջ բացւել էր երկար սրահ, այդ սրահով գնացել, դուրս էր եկել մի մացառուտ, որտեղից երկում էր արդէն դաշտը և կարելի էր անարգել իջնել անապատ։

Երբ գիշերը վրայ հասաւ, Պետրօն, Դօնէստևանը, ինժինէրը, չենրիկի հայրն ու ինքը չենրիկը իջան այդ հորը, որն ունէր միայն 150 ոտք բարձրութիւն. ապա սրահով դուրս եկան անապատը։ Ամենքն էլ յուզւած էին։ Պետրօն կրկին ուզեց համոզել չենրիկին, որ ինքը գնայ, այս անգամ չենրիկը հաստատ մնաց իր որոշման։

Մեծ զգուշութեամբ չենրիկին պարանով կախեցին ցած, վերջապէս նրա ոտները գետնին հասան։ Ինչպէս պայմանաւորւել էին, մէկ սուլոցով նա իմաց տւեց իր յաջող էջքի մասին։ Սարսուռ բերող լուռութեան մէջ էր նա. անմիջապէս ուղղեց դէպի այն կողմը, ուր տեսել էր կըուզադերին։ Երբ անցաւ մօտ 400

մետք տարածութիւն, նա կանչեց իր ձիուն։ Հէնց առաջին շվարցին նա լսեց իր սիրական ձիու չափաւոր վազքը։ Կըուզադերն արդէն նրա մօտ էր։ Գրկեց, համբուրեց, ապա սանձ դնելով բերանը՝ նստեց իր թռչուն ձին ու սլացաւ անապատով։

Հայրը նայում էր սկ, խիտ մթութեան մէջ, բայց ոչինչ չէր տեսնում. Պետրօն ինչ որ մըրբաց ինժինէրի ականջին, սա շլացուցիչ կապոյտ լոյսով լուսաւորեց անապատի մի շերտ. հէնց այդ տեղով արշաւում էր չենրիկը՝ իր կըուզադերի մէջքին բևեռած՝ դէպի Արիսպ քաղաքը։

«Ազատւեց չենրիկը, ազատւեց», բացականչեց հայրը՝ սրբելով արտասուբները. «Կազմակերպեց», վրայ բերեց յուզւած Պետրօն։ Այնուամենայնիւ մեքսիկացիք իրենց դեռ ազատւած չէին կարող համարել։ Մորմոքում էր Գերթրուդի սիրտը. Նա անգաղաքար հարցնում էր Պետրօին չենրիկի մասին, սա միիթարում էր վըճռական տօնով։

Արիսպում ապրում էր Վիլլանեի ընկեր և բարեկամ գնդապետ Ռեկվեգենցը. սրա և սրագօրքի վրայ էր յոյսը զրել Վիլլանեը. Սակայն փորձառութեան բովով անցած մարդիկ կասկածում էին դեռ գործի յաջող ելքին։

## ՈԵԿՎԵԶԵՆՑ ԳՆԴԱՊԵՏԸ

Արիսպում, ինչպէս ենթադրում էր Պետրօն, շատ հետաքրքրում էին կարաւանի վիճակը, և լուրերի բացակայութիւնը երկիւղ էր առաջ բերել այդտեղ:

Անցաւ մի ամիս, բայց ոչ մի լուր չհասաւ կարաւանի մասին: Գնդապետ Ռեկվեզենցի ուղարկած սուրհանդակները վերադարձել էին դատարկածեռն: Այն գիտակցութիւնը, թէ կարաւանի հետ է Պետրօն, հանգստացնում էր գընդապետին և հետաքրքրողներին: Սակայն ժամանակն անցնում էր, և գնդապետի այն երկիւղը, թէ բարեկամներն ընկել են հնդիկների ձեռքը, աւելի ու աւելի զօրեղանում էր:

Չիմանալով, թէ ուր է գնում կարաւանը, նրան օգնութեան գնալը անծայր անապատում, անմիտ բան էր համարում գնդապետը:

Վիլանեի աներոջ որդին (կնոջ եղբայրը) եկաւ Արիսպ և խնդրում էր գնդապետին մի կերպ պարզել, թէ ինչ վիճակի մէջ է կարաւանը: Բայց ինչ կարող էր անել Ռեկվեզենցը: Այնուամենայնիւ Վիլանեի բարեկամը, աներոջ որդին, որոշեց լաւ զինել բանւորներին և գնալ անապատ օգնութեան: գնդապետը համաձայնեց ուղարկել նրանց հետ երկու գունդ զօրք: Սակայն չարիքն այն էր, որ նրանք չգիտէին նոյն իսկ, թէ կարաւանն ինչ ուղղութեամբ էր գնացել:

Մինչ այդ մասին բանակցում էին գնդապետն ու Վիլանեի բարեկամը, քաղաքի հրապարակից աղմուկ—աղաղակի ձայներ հասանակամայ հայեացքներն ուղղեցին այն կողմը և նրանց առաջ բացւեց այս պատկերը. տանջւած ու քրտնաթոր ձիու վրայ քաղաք էր սլանում դժգոյն ու հիւծւած մի երիտասարդ. ձեռքին բոնել էր մի նամակ, իսկ հայեացքն ուղղել էր գնդապետի տանը:

Այդ ձիաւորը Հենրիկն էր. հինգ օր նա արշաւել էր անապատում. պարէնը վերջացել էր, և նա քաղցից խիստ ընկճել էր: Տեսնելով գնդապետին, նա լուռ մեկնեց նրան ձեռքի ծըռարը: Իջնելով ձիուց՝ ամենից առաջ հոգաց նրա մասին:

Գնդապետն արագ աչքովն անցրեց Դօնիստեանի նամակը և իմացաւ, որ կարաւանը պաշարւած է Կորած Սարում:

Քիչ ուտելուց և ոյժ առնելուց յետոյ Հենրիկը պատմեց այն բոլոր սարսափների մասին, որ կըում էին իր բարեկամները: Այլևս չէր կարելի դանդաղել: Հենրիկը պիտի առաջնորդէր զօրքը ամենակարճ ճանապարհով դէպի Կորած Սարը:

Երբ զինւորական փողը հնչեց, ամենքն իմացան, որ զօրքը գնում է հնդիկների դէմ կըուելու: Քաղաքը ուրախ աղաղակներով ճանապարհ էր ձգում զօրքը: Բանւորները նոյնպէս

միացան զօրքին, որն արագ շարժւեց դէպի Կո-  
րած Սարը:

### ՎԵՐՋԻՆ ՓՈՐՁ

Հենրիկի գնալուց տասը օր յետոյ մեքոփ-  
կացիք սարից նկատեցին անապատի մէջ այն  
կօյօտնելին, որոնք վերադառնում էին Գոր-  
կագիդի ափերից. նրանք բերում էին ի-  
րենց հետ հարուստ աւար՝ բարձած ձիաներին:  
Այն ինչ մեքսիկացիք սովի էին դատապարտած.  
յուսահատութիւնը տիրել էր ամենքին:

Մեքսիկացիների դրութիւնն աւելի վատ-  
թարացաւ, երբ նրանց առաջ բացւեց հետեւել  
տեսարանը. հարբած հնդիկները քշում, տանում  
էին ոտաբոբիկ ու ձեռքերը կապ գերիներին,  
որոնց մերկ ոտքերից արիւն էր հոսում. նրանք  
յանդուզն կերպով մօտենում էին կորած Սա-  
րին և ի տես մեքսիկացիների՝ իրենց յաղթու-  
թիւնը տօնում:

Գերթուզն ու Վիլլանեի կինը դուրս չէին  
գալիս իրենց բնակարանից. թախիծը պատել էր  
ամենքի սիրար: Այժմ ամենքին պարզ էր մօ-  
տալուտ մահը: Բայց նախքան մեռնելը, նրանք  
ուզում էին վրէժ առնել, ինչպէս հարկն է:

Երկու քաջ երիտասարդ ցած իջան հորով,  
դուրս եկան անապատ, շրջեցին սարը և, ծա-  
ծուկ մօտենալով հնդիկ պահապաններին, խող-  
խողեցին նրանց դաշոյնով: Այդպէս լուծեցին

նրանք իրենց երկու ընկերների մահւան վրէժը  
Առաւօտեան հնդիկներին մեծ զարմանք  
պատեց. կատաղած բղաւում էին և հայհոյում ա-  
նապատից մեքսիկացիներին: Սակայն այդ եր-  
կու երիտասարդի սխրագործութիւնը մի որոշ  
թեթևութիւն չտւեց մեքսիկացիներին: Օրերն  
անցնում էին, իսկ օդնութիւն չկար ու չկար:  
Միայն Պետրօն էր մնում սառնարիւն. նա գի-  
տէր, որ զօրքը չի կարող այն արագութեամբ  
շարժւել, ինչպէս մի քանի ձիւոր. նրա հաշ-  
ով Հենրիկի գնալուց տաննըշորս օր յետոյ կա-  
րելի էր սպասել հաստատապէս զօրքի երեա-  
լուն: Պետրօի խօսքերը յոյս էին տալիս ամեն-  
քին:

*Հերուցիք 45=55*  
ՏԱՄՆԸՂՄԵԿԵՐԱՐԴ ՕՐԻԱՅ ԵՐԵԿՈՆ  
*Հերուցիք 45=55*  
Վերջապէս հեռուում սկին անեց կորած Սա-  
րի գագաթը: Գնդապետն սկսել էր յուսահատ-  
ւել, որ չեն կարող գտնել այդ սարը: Բայց Հեն-  
րիկը, որպէս առաջնորդող, վստահ էր, որ ճա-  
նապարհը չեն կորցրել և այժմ մեծ թեթևու-  
թեամբ շունչ քաշեց, երբ նկատեց քիչ հեռուում  
մեկուսացած արմաւենին, որ Պետրօի համար  
նշան էր ծառայում, թէ սարը այդտեղից 20  
մղոն տարածութեան վրայ է:

Գնդապետ Ռեկվեգենցը խորհրդի հրաւիրեց  
բոլոր սպաներին, թէ ինչպէս անեն, որ յան-  
կարծակի յարձակումով կարողանան ոչնչացնել

միանգամից թշնամուն. ինքը առաջարկեց մօտենալ թշնամուն այն չափով, որ կարողանայ հասնել թնդանօթի գնդակը, և սկսել որմբակոծութիւնը. Բայց ծեր ու փորձւած մայօրը գտաւ, որ այդ այնքան էլ արդիւնաւէտ չի կարող լինել, որովհետև թշնամին կարող է ցիր ու ցան փախչել ամեն կողմ: Նա առաջարկեց հարթ տարածութեան վրայ շրջապատել թշնամու բանակը, մօտենալով սարին, կազմել օղակ և ապա մօտ գնալով փոքրացնել շրջանը. այդ կերպ հնդիկները կատարեալ թակարդի մէջ կը ընկնեն:

Վերջին ծրագիրն ընդունւեց միաձայն: Որոշեցին սպասել գիշերւան, մի քանի ժամ հանդըստանալ և թարմ ուժերով սկսել յարձակումը:

### ՃԱԿԱԾԱՄԱՐՏՆ ՈՒ ԱԶԱՏԻԵԼԸ

Նոյն օրն ու նոյն ժամին, երբ Ռեկվեզենց գնդապետն իր օգնականների հետ որոշում էր ու կազմում ճակաամարտի ծրագիրը, մեքսիկացիք կորած Սարի վրայ կատարեալ յուսահատութեան մէջ էին:

Դօն-Էստեանը յայտնեց Պետրօին, թէ Պետրօն զառանցում է ազատութեան տենչով. ազատութիւն չէ վիճակւած ոչ ոքի: Տրեսիլլիան նոյն բանն էր կրկնում. նա բոլորովին յոյսը կտրել էր, թէ երբ և է կարող է որդուն, չենրիկին, տեսնել: Անապատը՝ անթիւ ու պէս-ալէս

անկանխատես վտանգների բոյն է. հաւանօրէն խեղճ չենիկը կորաւ այնտեղ, և Արիսպում ոչ ոք ոչինչ չգիտէ նոցա անբախտութեան մասին:

Մեքսիկացիների պալատը բոլորովին վերջացել էր. մարդիկ թուլացել էին և մարմնով և հոգով: Դօն-Էստեանն վճռեց, թէ այժմ իրենք պէտք է սկսեն ոմբակոծել թշնամու բանակը, որ սա էլ յարձակւի իրենց վրայ, և ապա պայթեցնեն թէ իրենց և թէ թշնամուն:

Սակայն Պետրօն հանգիստ էր և լի յուսով. նա այսպէս էր դատում. հինգ օրւայ ընթացքում չենրիկը կարող էր հասնել Արիսպ, իսկ զօրքի համար ամենապակասը հարկաւոր է եօթօր. որ կարողանայ անցնել այդպիսի մեծ ու դժւար տարածութիւն:

Մեքսիկացիների համբերութիւնը հատաւ տասնըմէկերորդ օրը այն ժամից, երբ չենրիկը գուրս էր եկել կորած Սարից: Պետրօն համոզում էր սպասել էլի մի օր, ապա դիմելինքնասպանութեան: Դօն-Էստեանը սակայն մնաց անյոզդողդ. երկու ժամից յետոյ մեքսիկացիների բախան էր որոշւելու:

Ծանր հոգոց հանեց Պետրօն, վեր առաւ հեռաղիտակն ու բարձրացաւ մեծ ժայռի գլուխը: Նա նկատեց յանկարծ, որ մի ինչոր բան շողին է տալիս մտնող արեկի ճաճանչների տակ. մի քանի վայրկեան նա կենդրոնացաւ այստեղ, ապա ծունկ չոքեց, և արտասուրի խոշոր կաթիւները գլորւեցին նրա պողպատ երեսից:

Պետրօն հեռադիտակը յանձնեց Դօն-Էստե-  
ւանին և կամաց ասաց, թէ այժմ Վիլլանել կա-  
րող է համոզել, որ Պետրօն չի գառանցում, որ  
նա տեսել է գնդապետ Ռեկվեգենցի զէնքը:

Շուտով ամենքն էլ համոզւեցին, որ մեք-  
սիկական զօրքը գտնւում է մի քանի մզօն հե-  
ռու կորած Սարից և հնդիկներից: Տեսարանը  
յուզիչ էր. լացն ու ծիծաղը իրար խառնւեցին.  
զրկում ու համբուրում էին միմեանց մեքսիկա-  
ցիք տենդոտ համբերութեամբ. ամենաթոյլերն  
անգամ հերոսական ոյժ առան:

Յանկարծ լսեցին հրացանի և թնդանօթի  
ձայներ: Ռեկվեգենցը յարձակումն սկսեց այն  
կողմից, ուր հնդիկները պահապաններ չունէին:  
Սարսափելի աղաղակները խլացրին անապատը.  
յարձակումն սկսւեց, երբ հնդիկները քնած էին.  
նրանց դրութիւնն աւելի վատացաւ, երբ ինժե-  
ները լուսաւորեց հնդկական բանակը. այն ինչ  
յարձակուղ զօրքը ստւէրի մէջ էր:

Սև-Ագուաւը սակայն կարողացաւ խրախու-  
սել իւրայիններին, որոնցից շատերը ձի նստեցին  
յարձակւելու թշնամու վրայ, բայց արդէն շըս-  
ջապատւած էին զօրքով:

Սև-Ագուաւը վայրկենաբար մի յանդուգն  
ծրագիր մտածեց. նա իր մարդկանց բաժանեց  
երկու մասի. մի մասին հրամայեց կուել մեք-  
սիկական զօրքի դէմ, միւսի գլուխն անցած նա  
գրոհ տւեց դէպի ձորակը՝ բարձրանալու կորած  
Սարը, ուր յոյս ունէր աղատւել թշնամուց:

Հանքահանները ժամանակ տւին Սև-Ագուա-  
ւի գնդին բարձրանալ մինչև ձորակի կէսը, որից  
յետոյ պայթեցնելով ժայռերը՝ քարերի տարափ-  
տեղացին կարմրամորթների գլխին. պակասը լրա-  
ցնում էին հրացանների համազարկերը:

Երբ վրայ հասաւ առաւօտը, հնդիկներից  
կենդանի էր մնացել մօտ 200 հոգի: Հնդկական  
դիակների կոյտերն էին բաժանում մեքսիկական  
զօրքն ու բանւորներին:

Թէ որքան յուզիչ էր նրանց հանդիպումը,  
նկարագրել անկարելի էր: Վերջապէս հանքա-  
հանները թողին իրանց բնական բերդը:

### Բ Ա Ն Ա Կ Դ Ա Ռ Ն Ա Լ Բ

Երբ հանքահանները վերադարձան իրանց  
բանակատեղին, շատ ուրախացան առանձնապէս  
այն բանի համար, որ մեքենաներն ու գործիք-  
ները մնացել էին անմնաս ու ամբողջ: Հնդիկ-  
ներն, ի հարկէ, չգիտէին, թէ որքան թանկ էին  
այդ առարկանները: Կարճ ժամանակում կարգի-  
բերին այն, ինչ փշացել էր:

Մկուեց պեղումների աշխատանքը. շուտով  
երևաց, որ այդ սարը յիրաւի բաղկացած էր  
ոսկուց: Տրեսիլլիան, Վիլլանեն ու ինժենէրը  
Պետրօին ընդունեցին իրենց ընկեր և ամբողջ  
հարսաւութիւնը բաժանում էին չորս մասի: Հան-  
քահանն բանւորներից իւրաքանչիւրը, որ կրել էր  
պաշարման ծանր դրութիւնը, ստացաւ մի գե-

ղեցիկ տուն և լաւ ոռնիկ։ Ամենքն էլ լի ու լի վարձատրւեցին իրենց զրկանքների փոխարէն։

### ՍԱՆՏԱ-ԳԵՐԹՐՈՒԴԻԿԱ

Մարդիկ առանց ազգային գիտակցութեան և քաղաքայիական հասունութեան ստիպւած են մեռնել բարոյապէս։ Բոլոր վայրենի և կիսավայրենի ցեղերն ու տգէտ ժողովուրդները դատապարտւած են կորստեան։ այն ինչ քաղաքակըրթւած պետութիւններն ու ժողովուրդները ամեն տարի հազարաւոր սերունդներ են յառաջացնում, որոնք երկրագնդի հեռու ծայրերում նոր պետութիւններ են հիմնում, նոր կուլտուրական կեանքի հիմք ձգում, քաղաքակրթութեան փըրկարար լոյսը խաւար ժողովուրդների մէջ տարածում։

Չանցաւ մի քանի տարի, կորած սարի ժայռու կուրծքը զարդարւեց մի գեղեցիկ, գոհար քաղաքով, որ տարէցտարի աճելով ցած էր իշնում սարի լանջով։ Նոր գաղութը հարստանում ու մեծանում էր նոր խանութներով, կրպակներով ու գործարաններով։

Շատ լաւ էին ապրում բանւորները. նրանք բաւական էին իրանց վիճակով, աշխայժ, ուրախ ու խելացի. ոչ ծանր, ուժից վեր աշխատանքը և ոչ էլ չնչին վարձը չէին ընկճել նրանց։ Քաղաքն ունէր իր դպրոցներն ու գրադարանները, մարդիկ ապրում էին խելացի ու ազնիւ կեան-

քով. ողջ քաղաքում չէիր գտնի մի անգրագէտ մարդ։

Երկաթուղին միացնում էր Սանթա-Գերթրուդէս քաղաքը Արիսպի հետ։

Հնտանեկան մեծ տօն էր. ամեն տեղ աշխատանքը դադար էր առել. մարդիկ տօնախըմբութեան մէջ էին։

Այդ օրը Հենրիկի և Գերթրուդի անգրանիկ գաւակի մկրտութեան ծէսն էր կատարւում։

Երբ Վիլանեը, Տրեսիլիան, Պետրօն, ինժինէրը, Գերթրուդն ու Հենրիկը դուրս էին գալիս տաճարից, ժողովուրդը գիմաւորում էր նըսանց «կեցցէ» աղաղակներով։

Մարդիկ գնահատեցին և սիրում էին այդ անձնազոհ քաջ անձնաւորութիւններին։

Ի պատիւ Գերթրուդի քաղաքը կոչւեց Սանթա-Գերթրուդէս։



# ՈՍԿԵ ԿՈՒՐՔԻ ԳԱՆՁԸ

(ԿԱՐԼ ԳԱ. Դ. ՕՇԻ 18)

ՀԱՅԱՍՏԱՆ

## ՈՍԿԵ ԿՈՒՐՔԻ ԳԱՆՁԸ

Ժմ ապրում է  
ու առ և և

I.

Բարձրահասակ, վայելչակաղմ ու սիրունա-  
տես երիտասարդ էր Տուլոս Պարկերը. որքան  
գրաւիչ էր նա արտաքուստ, նոյնքան հմայիչ  
իր բարի բնաւորութեամբ, առողջ խելքով ու  
հոգով։ Նոր էր բոլորել նրա քսան և չորս տա-  
րին, բայց նրա հոգին գեռ մանկական էր, պարզ  
ու միամիտ։ Մարգկային մտքի լաբիրինթ խար-  
դախութիւններն ու նենգ չարութիւնները գեռ  
անծանօթ էին նրա յստակ մտքին, որ բող-  
բոշում էր բարւոյ, գեղեցկի ու մաքրութեան  
ցօղերով։

Նա չէր տեսել իր մօրը, սիրում ու չերմ  
հաւատում էր հօրը, Անդրէաս Պարկերին. սա,  
իրօք, սիրող հայր էր և բարի բաղաքացի, ա-  
ռանձնապէս մեծ հեղինակութիւն ունէր և տու-  
քինի մարդ էր համարւում Տուլոսի աշքում։  
Տուլոսը իր հարեաններից ամենից շատ

այցելում էր միստեր Ստօփ ընտանիքը։ Օրիորդ Հերօն այդ ընտանիքի ծաղկին էր. նա հասակն առել, որպէս վարդի կոկոն բացւել էր. նուրբ դիմագծերը, մարմնի համաչափ կազմւածքը, նա-զանի քայլքն ու համեստ, բայց ազատ շար-ժումները չէին կարող չկերել Տուլլոսի նման մի հոգու, որը գեղեցկութեան սիրահար էր։

Պակաս չա՛մ և Հերօն Տուլ-լոսի գեղեցկութսասր։ Որա՛ք արդէն այնքան մօտեցել էին իրար, որ չէին էլ նկատում իրա-րու գեղեցկութիւն։ Ներքին, հոգեկան բարե-մասնութիւններն էին, որ մազնիսին նման ձգում էին իրար և կապում այդ երկու դեռափթիթ էակներին մի անօրինակ հաճելի զգացմունքով։

Միստեր Ստօն մեծ յարդանքով էր ընդու-նում Տուլլոսին. տեսնում և գնահատում էր նրա անձնական արժանիքները. նա գիտէր, որ Տուլ-լոսից լաւ փեսայ չի կարող ունենալ. բայց մի հանգամանք նրան յետ էր կասեցնում այդ մըտ-քից։ Նա նոյն իսկ ափսոսում և ցաւում էր, որ զրկում է Տուլլոսի նման երիտասարդի բարե-կամութիւնից. այնուամենայնիւ չէր կարող այդ հանգամանքի դէմ գնալ, չէր կարող իր աղջիկը մարդասպանի որդուն կնութեան տալ։

Օրերից մէկում, միստեր Ստօն այլևս չկա-րողանալով համբերել Տուլլոսի յաճախակի դի-մումներին, յայտնեց նրան ափսոսանքի շեշտով, թէ Հերօն նախախնամութեան, երկի, նախո-ըոշմամբ չի վիճակւել անբաժան ընկեր դառնալ

Տուլլոսին։ Նա, որ վերին աստիճանի բարեկիրթ ու պատւազգաց մարդ էր, թոյլ չտւեց իրեն իսկական պատճառն ասել, այլ ինդրեց, որ Տուլ-լոսն այդ իմանայ իր հօրից. անձարացած՝ մի-այն այսքանը յայտնեց, թէ նրա հօրը դատա-րանը որոշ յանցանքի համար դատապարտել է տաժանակիր աշխատանքի, որից հայրը խուսափել է ու փախել և այժմ ապրում է կեղծ անունով։

Կայծակնահար տուն վազեց Տուլլոսը, մը-տաւ հօր սենեակն ու հեծկլտոցով բացական-չեց. «Հայր, հայր, միթէ դու չարագործ ես... միթէ դու ընդունակ ես արիւն թափե-լու... ես ինչ էի մտածում... և ինչպէս հա-ւատացած էի... ով Աստւած իմ, միթէ խարւոծ եմ...»։

Հայրը հանդարտ ու ծանր տոնով հանդըս-տացրեց որդուն. ասաց, որ ինչ ուրիշներն ա-սել են, ճիշտ է, թէ իր իսկական անունն է Առնոլդ Լիթէլ, և ոչ Անդրէս Պարկեր. սակայն ինքը յանցաւոր չէ, ունի նոյնիսկ ապացոյցներ, փառտաթղթեր իր անմեղութեան համար. բայց այդ թղթերը ձեռք բերելը շատ ու շատ դժւար է։ Քսան տարուց աւելի է, որ ինքը ծածկանունով թափառում է երկրեց երկիր. կրել է շատ զրկանքներ ու տառապանք, հանդիպել է ար-տասովոր արկածների, որոնք հիւծել են նրան և ֆիզիսապէս և հոգեպէս։ Այժմ նա անկարող է անձամբ գնալ այդ փառտաթղթերի յետեւից։ Յոյս ունէր, որ այդ զրութեամբ էլ գերեզման

կիջնէր, որից յետոյ որդուն կյաջողւէր, իր յանձնաբարութեամբ փնտրել այդ հարկաւոր թղթերն ու ապացուցել հօր անմեղութիւնը, որբագործել նրա արատաւորւած անունը: Այդ նպատակով էլ նա նախօրօք կտակ է արել և յանձնել վստահելի անձի:

Հիմա քանի որ այդ գաղտնիքը յայտնի եղաւ որդուն, Տուլլոսին, հայրը յանձնաբարեց նրան ճանապարհորդութիւն կատարել, մանգալ արարաշխարհը, ուսումնասիրել ու ճանաչել մարդկանց և բնութիւնը. կազդուրել, պողպատ գարձնել հոգին ու մարմինը, որ երբէք չընկճւի ոչ մի փորձանքի, ոչ մի արհաւիրքի հարւածի տակ. ձեռք բերել մեծ փորձառութիւն, ճարպիկութիւն, հնարազիտութիւն, ձեռներէց ոգի և ընդունակ դասնալ խրոխտ նայելու մահւան սարսուռ աչքերին:

Եւ երբ երեք տարուց յետոյ կը վերագառնայ տուն, հայրը կը պատմէ նրան ամբողջ եղելութիւնը, որից յետոյ միայն Տուլլոսը կը զիմէ իր բուն նպատակին, կուղերւի ձեռք բերելու հօրն արդարացնող փաստաթղթերը:

Տուլլոսը լուռ լսում էր հօրը. նրա սիրոն այրւում էր, որ հայրն անմեղ մեղաւոր է դարձել և իզուր տանջւել այդքան տարի: Նա էլ չհարցրեց, թէ որտեղից և ինչպէս պէտք է գլունել այդ թղթերը և միւս օրը ճանապարհ ընկաւ, որպէսզի նախ պատրաստուի և մարզւի մեծ

Ճեռնարկութիւններ կատարելու, ապա թէ սկսի այդ մեծ գործը:

II.

Բախտը Տուլլոսի առաջ շատ փորձանքներ, շատ արկածներ բերեց. մեծ վտանգներից, ահուելի դէպքերից նա չխուսափեց. միշտ էլ յանդուզն ու վստահ առաջ էր գնում և միշտ էլ բոնկւած կուից յաջող դուրս գալիս:

Երկու տարի էր անցել այն օրից, երբ նա թողեց հայրենի օջախը, հսկայ Լոնդոն քաղաքը: Վերջապէս նա այժմ գտնւում է Աֆրիկայում, էլ-Օբէիդ օազիսում: Օազիսի բնակիչներն էին բեղունները— արաբները:

Երկու հանգամանք գրդեցին Տուլլոսին կանգառնել այդ օազիսում. նախ՝ որ այդ վայրը խիստ նկարչական դիրք ունէր. Տուլլոսը ծնւած էր նկարիչ. բայց նրա նախկին նկարները թոյլ էին, անկենդան, մակերեսոյթային: Դեռ դպրոցում ուսուցիչները գտել էին նրա մէջ խոշոր տաղանդի սաղմ, որի բացման ու զարգացման համար անհրաժեշտ էր համապատասխան միջավայր: Աֆրիկայի վայրի բնութիւնը աւելի քան նպաստող էր այդ նկարմամբ: Տուլլոսի նկարներն այստեղ խորն էին, բնական, կենդանի ու հմայիչ. նրա տաղանդն իր կատարելութեան հասաւ այս անաղարտ բնութեան ծոցում: Երկրորդ՝ օազիսը լի էր վայրի զագաննե-

բով, յատկապէս առիւծներով. իսկ առիւծ որսալն ամենամեծ բաւականութիւնն էր Տուլոսի համար:

Որսի ժամանակ, ինչպէս և ամբողջ թափառութիւնը շրջանում, նրա անբաժան ուղեկից օգնականներն էին Յաբուլ շունը, գայլակեր կոչւած շների ցեղից, և Թօքի անունով արաբը, որին նա գնել էր արաբական մի շեյխից: Թօքին դեռ պատանի էր. նա՝ ազատւելով ստրկական վիճակից՝ շատ շուտով և մեծ սիրով կապւեց Տուլոսի հետ. հաւատարիմ ծառայում էր նրան և սիրում անկեղծ հոգով:

Տուլոսը արաբների մէջ մեծ անուն հանեց իր քաջագործութիւններով: Նրան կանչում էին «Անհաւատների Առիւծ»:

Քիչ չէր պատահել, որ արաբական ամբողջ գիւղեր՝ սարսափահար վայրի գագանների յարձակութիւնից՝ դիմում էին Տուլոսին օգնութեան: Տուլոսը ոչ ոքի չէր ինայում իր օգնութիւնը և ամենքին փրկում էր վերահաս մահից: Այդ էր պատճառը, որ արաբները թէև ասում էին եւրոպացիներին, բայց հիանում էին Տուլոսի ասպետ ու վեհ վարմունքից և մեծ ակնածութեամբ ու յարգանքով լսում և հնագանդուում նրան:

Առանձին յարգանք ու պատիւ էր վայելում Տուլոսը շէյխ Սիդի-Բարգաշի մօտ, որ բեդւինների կրօնական ու վարչական պետն էր:

Մի օր Տուլոսը որսի չգնաց. նստած տա-

նը հօրից նամակի էր սպասում, երկար ժամանակ չէր ստացել. նա անհանգիստ էր: Միտհած նախազգացում պատել էր նրա սիրար: Որպէսզի փարատէ այդ ձնշող տպաւորութիւնը, գրիչը վերցրեց, որ շարունակէ բեղւիմների կենցաղագրութիւնը:

Այդ պահին Թօքին յայտնեց, որ շէյխ Սիդի-Բարգաշը կանչում է կարևոր գործի համար: Երբ Տուլոսը մօտեցաւ շէյխի բնակարանին, արաբներին յուզւած գտաւ: Պատճառն այն էր, որ արաբական մի այլ ցեղ՝ յայտնի իր կատաղի, աւազակաբարոյ կենցաղով՝ յարձակուում էր այդ ցեղի վրայ. անհրաժեշտ էր վտանգի առաջն առնել: Տուլոսը նախ անհրաժեշտ տեղեկութիւններ հաւաքեց թշնամու. և այդ ցեղի ուժերի մասին. ապա, երբ տեսաւ, որ զիմազրութիւնն աւելորդ է, քանի որ թշնամին գերազանց էր և՛ թւով և՛ պատրաստութեամբ, խորհուրդ տւեց շէյխին շուտով հեռանալ այդ տեղից, միանալ այլ ցեղերի: Հետ և նոր դուրս դալ թշնամու դէմ:

Տուլոսը, որ քաջ ուսութիւնամիրել էր արաբական աշխարհը, յատկապէս մահմեդական կրօնը, իր խորհրդի կարևորութիւնը հաստատեց նոյն իսկ Ղուրանի խօսքերով. «Մի գնա մերկ ձեռքերով (անզէն) չար ոսովի գէմ, նրան ձանապարհ տուր, որ մօտովդ անցնի, և առնելով սուր նիզակը, խոցուիր նրա կողը»:

Տուլոսի խորհուրդն ընդունւեց ամենքի կողմից: Մինչ այդ, նա յատկի վրայ նկատեց

մի թուղթ, ուր ի միջի այլոց գրած էր. «Տուլ-  
լս Պարկերի ուշադրութիւնն ենք հրաւիրում»:  
Նա վերցրեց այդ թուղթը, որ անդիմական լրա-  
գրի մի կտոր էր: Սուրհանդակը մօտիկ քաղա-  
քից բերել էր իր հետ զանազան իրեր, փաթա-  
թած այդ լրագրներով:

Նա արագ վերադարձաւ իր բնակարա-  
նը, հրամայեց Թօքիին շտապ լապտերը վա-  
ռել, որի լոյսի տակ սկսեց կարդալ հետևեալ  
յայտարարութիւնը նոյն լրագրում, որ վերցրել  
էր իր հետ. „Տուլս Պարկերի ուշադրութիւնն ենք  
հրաւիրում”:

Փնտրում են Տուլս Պարկերին, որ տարի  
ու կէս սրանից առաջ ճանապարհորդութեան է  
դուրս եկել: Մեծ անբախտութիւն է պատահել.  
Նրա հայրը, միստեր Անդրէս Պարկերը, կենդա-  
նի թաղած է:

Դիմել՝ նոտարիուս Վալտեր Ռաբբինդին.  
Ստիպլ-ստրինգ, 289, Լիվերպուլ»:

«Հօրս բռնել են, ասաց Տուլսը, պէտք է  
հասնել օգնութեան»: Միւս օրը, արշալոյսին,  
երբ արաբական ցեղը՝ մօտալուս վտանգի սար-  
սափի տակ՝ թողնում էր իր բնակավայրը և  
չեռւմ հարեանների մօտ, տանելով իր հետ ու-  
նեցած-չունեցածը, Տուլսն էլ ուղտերի վրայ  
բարձած իր փոքրիկ գոյքը և Ցարու շանը՝ դի-  
մեց դէպի Անդրէս, մնաս բարով ասելով անա-  
պատի այդ թշւառ զաւակներին: 

III.

Անցաւ ուղիղ մի ամիս: Գարնանային գե-  
ղեցիկ առաւօտ էր, օդը զով, բնութիւնը թարմ,  
երբ Տուլսի կառքը կանգ առաւ նոտարիուս  
Ռաբբինդի առաջ Լիվերպուլ քաղաքում:

Ռաբբինդը սիրով ընդունեց Տուլսին, պատ-  
մեց դէպի մասին և յանձնեց նրան հօր կտա-  
կը, որ պահւում էր իր մօտ:

Տուլսն՝ առնելով կտակը նոտարիուսի ձեռ-  
քից՝ սկսեց բարձր կարդալ:

«Թանկագին որդուս իմ կտակը!»

«Աստւած տեսնում է իմ սիրու, և երկին-  
քը գիտէ, որ իմ այս խոստովանութեան մէջ  
չկայ ոչ մի սուտ, չկայ ոչ մի կեղծ խօսք: Երդ-  
ւում եմ, ինչպէս Ամենաբարձրեալի գահի առաջ,  
ասել ամբողջ ճշմարտութիւնը, ոչինչ չթաքցնել,  
ոչինչ չաւելացնել: Այս խոստովանութիւնը չեմ  
գրում ինձ արդարացնելու համար: Արդարանա-  
լու յոյսս վազուց եմ կորցրել: Միայն Աստւած  
կարող է վերականգնել ճշմարտութիւնը, օգնել  
ինձ ամենադժւար գործում, այն է՝ գտնելու իմ  
փաստաթղթերը, որոնց շնորհիւ իրաւունք կու-  
նենամ պարզերես նայելու մարդկանց աչբերին»:

«Ես գրում եմ բացառապէս իմ աննման որ-  
դու համար, որ նա իմանայ ստոյգը իմ կեանքի  
մասին, որ նրա սրտում չծնեն կասկածներ այդ  
առթիւ:

«Ես ի բացակայ դատապարտւած եմ ցմահ տաժանակիր աշխատանքի. եթէ մաքուր խղճով կարող եմ ասել, որ արժանի չեմ այդ խիստ պատժին, այնուամենայնիւ չեմ համարձակւում յայտնել, որ իմ կեանքը օրինակելի մաքրութիւն է ունեցել»:

«Իմ կինը գեղեցկուհի էր, ես բախտաւոր հայր էի սքանչելի զաւակի, ունէի լաւ կարողութիւն և պատւաւոր դիլք հասարակութեան մէջ: Եթէ աշխատէի, կարող էի էլ աւելի առաջ գնալ, ընդհանուրի յարգանքը ձեռք բերել: Բայց հէնց պատանեկական հասակից ես ընկայ մարդկանց մի շրջան, որոնց բարոյականը կայուն չէր: Մի ժամանակ ես տարւեցի արշաւախաղերով, ապա նւիրւեցի թղթախաղին, որ ինձ տարաւ դէպի կորուստ»:

«Մի անգամ կնոջիցս ծածուկ գնացի հանքային ջրերը, ուր հաւաքւում էին յայտնի թուղթ խաղացողներ. իջայ մի շքեղ հիւրանոց, և իմ մշտական խաղակցիս հետ միասին բոնեցինք մի սենեակ. նրա անունն էր Յուլիանոս Լիւստոսն: Ծանօթացանք թուղթ խաղացողների հետ և շուտով սկսւեցին բորբոքւած խաղերի օրերը»:

Մի երեկոյ խաղը խոշոր ծաւալ ստացաւ, որի ընթացքում խմում էինք շամպանսկի: Յուլիանոսի խաղը յաջող էր. ես չափից աւելի խը մել էի և վատ էի խաղում: Իմ և նրա մէջ վէճ մել էի և վատ էի խաղում: Իմ և նրա մէջ վէճ ծագեց. նա ինձ վիրաւորեց. ես յարձակւեցի նրա վրայ, եթէ չմիջամտէին միւսները, բանը

կուի կըհասնէր: Մեզ բաժանեցին և ստիպեցին հաշտւել»:

«Պէտք է ասել, որ այդ ժամանակ սենեակից գուրս գալիս ես սպառնացի Յուլիանոսին—կարծեմ, ասել եմ, —սպասիր, անպիտան, սպասիր, ես քեզ կըսպանեմ, անպայման կըսպանեմ:

«Այդ երկի լսել էր ծառան, որը գոնէ դատարանում այդպիսի ցուցմունք էր տւել»:

«Ես նորից մտայ նրանց մօտ և շարունակեցի խաղալ»:

«Իմ բնաւորութիւնը շատ խաղաղ է. ձիշտէ, շուտ եմ տաքանում, բայց շուտ էլ տեղի եմ տալիս: Յուլիանոսի հետ միասին թողինք խաղը, դարձանք մեր սենեակը. ես կատարեալ հանգիստ էի. խօսեցի նրա հետ: Երկու խօսք բաւական էր, որ մենք բոլորովին հաշտւէինք: Յուլիանոսը մեծահոգի և բացսիրտ մարդ էր. տարած փողերից մի բան էլ նոյնիսկ ինձ տւաւ: Մենք նոյնիսկ ծիծաղեցինք, յիշելով մեր անմիտ վէճը»:

«Լաւ յիշում եմ, Յուլիանոսը նոյնիսկ ինձ զգուշացրեց խաղի ժամանակ շխմել շամպանսկի, որ վատ է աղդում ինձ վրայ, որովհետեւ հասարակ թիւրիմացութիւնից կարող է մէծ բան ծագել:

«Շուտով քնեցինք: Լուսաբացին ես զարթնեցի. զլուխս սարսափելի ցաւում էր: Շատ ծարաւ էի, սենեակը ցուրտ էր, չէին ուզում

Վեր կենաւ, զբա համար ուղեցի ձայն աալ Յու-  
լիանոսին, որ ինձ ջուր տայ: Նա ձայն չէր տա-  
լիս, այդ տարօրինակ թւաց ինձ: Վեր թռայ ան-  
կողնուց և մօտեցայ նրա մահճակալին: Արիւնս  
սառեց երակներիս մէջ, նրա մարմինը կիսա-  
մերկ՝ խողխողւած էր բազմաթիւ վերքերով,  
ծածկւած արիւնով. կարւած էր և կոկորդը:

«Մազերս բիզ-բիզ կանգնեցին: Կայծակի  
արագութեամբ այն միտքն արթնացաւ, թէ ինձ կը  
մեղաղըն այդ գաղանութեան համար:

«Ժամանակ չունէի երկար մտածելու, գու-  
ցէ կարողանայի այլ ելք գտնել: Պէտք է աղմուկ  
բարձրացնէի, իմաց տայի այդ մասին: Գուցէ  
իշխանութիւնը կըգանէր իսկական յանցաւորին,  
Յուլիանոսի սպանողին:

«Մեծ էր երկիւղը, որ զգացի այդ բոպէին.  
Կորցը հաւասարակշութիւնս և անընդունակ  
դարձայ մտածելու, խորհելու և կշռելու իմ  
վարմունքն ու նրա հետևանքները:

«Ինքնապաշտպանութեան բնագդը, այդ գա-  
ղանական բնագանդը ստիպում էր ինձ փախչել,  
և ես փախայ:

«Ծածուկ մտայ լոնդոն և փող վերցնելով  
հետո անցայ Ենգլիայի մայր ցամաքը:

«Մարտուոով էի կարդում անգլիական թեր-  
թերը, որ նւիրում էին ահազին էջեր Յուլիա-  
նոսի սպանութեան: Զարագործը տարել էր Յու-  
լիանոսի ամբողջ գումարը: Իշխանութեան ձեռք

առած բոլոր միջոցները, մարդասպանին գտնե-  
լու անյաջող անցան:

«Որովհետեւ ես փախել էի նոյն սենեակից,  
ուր սպանւած էր Յուլիանոսը, բնականարար կաս-  
կածն ինձ վրայ էր ընկել: Ինձ անւանում էին  
մարդասպան, կողոպտիչ, չարագործ:

«Մի քանի ժամանակից յետոյ դատարանը  
վճիռ կայացըեց և դատապարտեց ինձ իմ բացա-  
կայութեամբ ցմահ տաժանակիր աշխատանքի,  
համարելով յանցաւոր այդ սպանութեան մէջ,  
որ կատարւած էր շահի դրդումով:

«Վերջապէս անկարելի էր. ես իմ ձեռքով  
փորեցի իմ ճանապարհը, իմ խելքով յանցաւոր  
ցոյց տւի ինձ. արդարանալու ոչ մի միջոց չու-  
նէի, սև էի ամենամութ գոյնով: Այդ պահից  
սկսեցին իմ թափառումները,

Խեղճ կինս չկարողացաւ տանել դժբախ-  
տութեան այդ ծանր հարւածը, որ հասաւ մեր  
ընտանիքին, և զերեզման իջաւ չարգւած ողբ-  
տով: Նա ասում էր, որ ինձ մեղաւոր չի ճա-  
նաշում, բայց վախենում եմ—նա սառն հող  
մտաւ ծանր կասկածների ցանցում:

«Վիշաը կրծում էր հոգիս և մզում երկրեց  
երկիր. վերջապէս փողս վերջացաւ, Գրեյի այդ  
մասին ազգականներիս և ստացաւ մի գումար,  
որով ճանապարհ ընկայ գէպի Հարաւային Ափ-  
քիկայ ոսկի փնտրելու:

«Այդտեղ ծանօթացայ Գասպար Թիկո ա-  
նունով մի արկածախնդիր գլխցեցու հետ:

«Ահա նրա կեանքի պատմութիւնը. երեսուն տարի նա ժընկում գործակատարի պաշտօն էր կատարել մի մեծ խանութում. Փոքրիկ ժառանգութիւն ստանալով՝ թողել էր ծառայութիւնը; Այդ օրերին Եւրոպայից ահազին քանակութեամբ մարդիկ էին գնում Հարաւային Աֆրիկա. այն լուրն էր տարածւել, թէ Աֆրիկայի դաշտերը լի են ոսկու հանքերով; Գասպարի գըլուխը պառյտ էր գալիս առասպելական այդ պատմութիւններից, որ վերջապէս նրան էլ քաշել էին այնուեղ:

«Բախար չէր ժպտացել նրան. եղած կարողութիւնն էլ հալւել էր. վերջին կոպէկներն էին մնացել, երբ նա միացաւ ինձ հետ:

«Որոշեցինք և անցանք «Մատաբէլէ» կոչւած ցեղի երկիրը, ուր լուրերի համաձայն հարկութիւն շատ պէտք է լինէր. այդ երրու համարեա անմատչելի էր, չուսումնակիրւած, ժողովուրդը վայրենի և խիստ կատաղի:

«Մեզ յաջողւեց զանազան փոկումնիկութիւններով ու խեղկատակութիւններով գրաւել այդ ցեղի իշխանաւորի, Բօլուկվանի համակւանքը:

«Յենւելով Բօլուկվանի աջակցութեան վրայ մենք բաւական հեշտ ու արագ գտանք ոսկու հարուստ բովեր, հանքեր: Թւում էր, որ կատարեալ բախտաւոր էինք. բայց այդ բախտը օդը ցնդեց:

«Հէնց նոր էինք սկսել պեղումը, երբ Բօ-

լուկվանը, այդ արիւնարբու բռնակալը, որ համարեա մարդակեր էր, բարկացաւ մեզ վրայ, չգիտեմ ինչու, և ապտակեց Գասպարին: Այս պինքնասէր գւիցերացին չհամբերեց և բռունցքի մի հարւածով զլորեց նրան գետին:

«Մեզ բռնեցին և մի հոր ձգեցին, որ ծածկւած էր եղեգնով: Բօլուկվանը դատապարտեց մեզ, ի հարկէ, մահւան:

«Մենք չէինք կարող, անշուշտ, հաշտուել այդ գրութեան հետ և զոհւել նեզրիտանական բռնակալի քմահաճոյքին. աշխատում և փորձում էինք մի կերպ ազատւել, որ յաջողւեց մեզ, թէ ինչպէս, պատմեմ մանրամասն, որ շատ կարևոր է և պատմութեանս էութիւնն է կազմում»:

IV.

«Այդ սկ բռնակալը, կատաղի Բօլուկվանը, այսպիսի սովորութիւն ունէր. բոլոր իր կարծած յանցաւորներին հաւաքում էր և որոշ օր, որ կոչում էր «Արեան տօն», կրօնական հանգէմների ժամանակ բոլորին միասին զոհ էր բերում իր կուռքերին:

«Մեր բախտից հետեւեալ «Արեան տօնը» կատարւելու էր երկու շաբաթից յետոյ: Մեզ թողին նոյն հորի մէջ, կերակրում էին, բայց և խիստ հսկում:

«Մեր գերութեան երրորդ, թէ չորրորդ օքը Բօլուկվանը դուրս եկաւ գիտելու իր գորքը»

Նա պատրաստւում էր կատարելու պատժիչ արշաւ իր ապստամբած գիւղերից մէկի վրայ: Զօրքը դիտելիս հրապարակի վրայ դրած էր մի տակառ վառող: Պատահաբար մօտակայ խարոյկից, ուր պատւաւոր հիւրերին հիւրասիրելու համար մի ամբողջ եղ էր խորովում, կայծեր ցրւեցին և ընկան ի միջի այլոց այդ տակառը, որը պայթեց և մեծ աւերում առաջացրեց. այդ պայթեցին զոհ գնացին մի քանի նեգրեր և քանդւեցին մօտակայ խրճիթները: Աւերումը հասաւ և մեր հորեանտին, սրա կտուրի կէսը վերցրեց մէջ տեղից: «Միւս օրը առաւօտեան ևս նըկատեցի, որ մեր բանտի պատն ևս խախտել էր, ձեղքւած տւել. մի քանի քարեր դուրս էին ցցւել: Հասարակ հետաքրքրութեամբ ես ձեռքտւի այդ քարերին, որոնք փուլ եկան և քիչ էր մնում, որ ջարդէին Գասպարի դլուխը, որը պառկած էր պատի տակը:

«Նայեցի ձեղքւածքից և նկատեցի միւտ կողմում աղօտ լոյս: Այն միտքը, թէ կարող էինք այդ ձեղքւածքով դուրս դալ ու փախչել, դրդեց ինձ սողալ դրա միջով և տեսնել, թէ ուր է տանում այդ լոյսը:

«Մեծ էր զարմանքս, երբ պատի միջով անցայ ու գտայ ինձ մի քարանձաւում, որի մէջ տեղում բարձրանում էր մի այլանդակ, ամբողջովին դեղին մետաղից ձուլած մի կուռք. նա զարդարւած էր թանկագին քարերով և ցոլում

էր անսովոր փայլով: Աչք էին ծակում խոշոր ալմաստները:

«Ապշացած յետ դարձայ Գասպարի մօտ և պատմեցի նրան. նա ևս անցաւ քարանձաւը, բայց կայծակնահար յետ դարձաւ, անաբեկւած կանչելով.—օձեր, օձեր: Յիրաւի Ոսկէ Կուռքի քարանձաւը լի էր թունաւոր օձերով, որ ես չէի նկատել: Այժմ յիշեցի, թէ Բօլուկվանի պալատում գոյութիւն ունի քրմերի մի դասակարգ, որի պարտականութիւնն է կատարել Ոսկէ Օձի + գաղտնի պաշտամունքը, թէ այդ պաշտամունքի գլխաւոր տաճարը գտնուում է նեգրերի բռնակալի նստավայրում, ուրեմն մենք կոյր դէպքի բերմունքով այդ տաճարումն էինք գտնուում, այսինքն քարանձաւում. այդտեղից քրմերը կրօնական տօներին դուրս են տանում Ոսկէ Կուռքը և հանդէս կատարում:

«Տեղացի բնակիչները վախենում էին մօտենալ ամճարին, ուր կային թունաւոր «Սուրբ» օձեր: Աւանդութիւնն ասում էր, որ ամեն մի քրմի մահից յետոյ, որը հաւատարիմ ծառայել է աստւածութեան, նրա հոգին անցնում է այդ տաճարի օձերից մէկին, որպէսզի հազարաւոր տարիների ընթացքում պաշտպանէ տաճարն անսուրբ արարածներից:

«Յիշեցի, որ քրմերը այդ օձերի հետ շատ մտերիմ էին: Տգէտ և մոլեռանդ նեգրերը այդ երկոյթին տալիս էին միստիքական բացարութիւններ: Ես, ի հարկէ, չէի կարող հա-

ւատալ և իսկոյն գլխի ընկայ, որ այդ օձերի ա-  
տամները հանում են քրմերը և ապա թողնում  
քարանձաւում:

«Այն միտքը, թէ մենք ոչ միայն կարող  
էինք ազատւել քարանձաւի միջով, այլ և տի-  
րանալ Ոսկէ Կուռքի ամբողջ հարստութեան, հա-  
մարձակութիւն տւեց ինձ նորից անցնել քա-  
րանձաւը և սկսել այդ ձեռնարկութիւնը։ Բայց  
նախ պէտք էր փրկել, արդեօք զ՞նւրկ են օձերը  
թունաւոր ատամներից և անվանաւ։

«Բախտը ինքը մեզ օգնութեան եկաւ։ Այդ  
ժամանակ մի օձ պատի ճեղքով սողաց դէպի  
մեզ։ Ես սպանեցի նրան և նայեցի բերանը։  
Թունաւոր ատամ չկար։ Անցայ քարանձաւը, որ-  
պէսզի կատարեալ ապահով լինեմ օձերի կող-  
մից մի փորձ էլ արի. այս անգամ բաւական  
ճարպիկ կերպով բռնեցի մի կենդանի օձի վզից և  
բաց արի բերանը։ Թունաւոր ատամները նոր էին  
հանել. նրանց տեղը փոս էր և վէրքը դեռ չէր լա-  
ւացել։ Իմ ենթագրութիւնը օձերի անվանգ լի-  
նելու մասին ճշտեց։

«Մեծ դժւարութեամբ ինձ յաջողւեց հա-  
մոզել Գասպարին, թէ օձերն անվաս չեն։  
Վերջապէս նա ևս համոզւեց և մի օրից յետոյ  
մենք փախանք Բօլուկվանի քաղաքից։

«Որովհետեւ երդւել եմ միշտ ճշմարիտն ա-  
սել, պէտք է խոստովանեմ, որ մենք թալանե-  
ցինք Ոսկէ Կուռքը, նրա ամբողջ գանձը վերց-  
րինք մեզ հետ, մեծ մասամբ թանկագին քա-

րեր. ալմաստ, ապազիոն, սուտակ, և արևակն.  
առանք հետներս նաև ոսկու մի քանի կտոր-  
ներ. ամենապակաս գնով այդ ամենն արժէր  
250 միլիոն ըուբլի։

«Յաջողութեամբ հասանք եւրոպական գա-  
ղութները, ուր կատարեալ ապահով զգացինք  
մեզ։ Ոսկու կտորները ծախեցինք մեծ գու-  
մարներով. նոյնպէս յաջողւեց խոշոր գումար-  
ներ ստանալ մեր գտած հանքատեղերի համար։  
Այդ գումարները՝ բացի ճանապարհի հարկաւոր  
ծախքերից, եւրոպական բանկերի աֆրիկական  
տեղային բաժանմունքների միջոցով տեղափո-  
խցինք եւրոպա։

«Մնում էին թանկագին քարերը, որ չէր  
կարելի միանգամից շուկայ գուրս բերել, փողի  
վերածել, մէկ՝ որ գրանց գինը կընկնէր, երկ-  
րորդ՝ պակաս վտանգ չէին ներկայացնում չա-  
րագործ աւագակները, արկածախնդիր մարդիկ  
որոնց թիւը քիչ չէր չարաւային Աֆրիկայում  
այդ ժամանակներ։

«Որոշեցինք, ի հարկէ, անցնել եւրոպա։ Կաս-  
կածների և յարձակումների տեղիք չտալու, կա-  
տարեալ ապահով ճանապարհորդելու համար մեզ  
անւանեցինք բնագէտներ. իսկ մեր զանձը լըց-  
րինք երկու պողպատէ սնդուկների մէջ, փակե-  
ցինք ամուր փականքներով և յայտարարում  
էինք, ուր առիթ էր լինում, թէ հանքաբանա-  
կան ժողովածու ենք տանում կոնգոնի Մուզէյի  
համար։

«Երբ հասանք Ովկիանոսի ափը, Օրօնդէս  
ապրանքատար շոգենաւը ուղևորւում էր Լիվեր-  
պուլ՝ Համաձայնւեցինք գնալ այդ նաւով, ուր  
կային բացի մեզանից էլի վեց հոգի, դրանցից  
մէկը, ասացին, հիւանդ էր, անունն Ալբրէստ,  
միւսը քարոզիչ էր՝ Մարկվարտ անունով։

«Առաջին օրը նաւի մէջ մանգալիս՝ հիւանդն  
աչքովս ընկաւ. ինձ թւաց, որ նա կարծես շը-  
փոթւեց, կուչ եկաւ ինձ տեսնելիս ու խոյս  
տւեց հանդիպումից։

«Երկրորդ օրը, երբ դուրս եկայ տախտա-  
կամածի վրայ ծխելու, այստեղ ոչ ոք չկար-  
յանկարծ իմ դիմաց դուրս եկաւ այդ հիւանդը,  
որ նման էր աւելի ստւերի, քան կենդանի մար-  
դու։ Նա մօտեցաւ ինձ և խիստ դժւարութեամբ  
հազարով, որի ժամանակ նա չարաշար տան-  
ջւում էր, ասաց. — ինձ չէք ճանաչում։

«Ես բացասական պատասխան տւի, դժգոհ  
տոնով։

«Սպասեցէք, — շնչաց նա վախեռոտ հա-  
յեացք ձգելով չորս կողմը, կարծես երկիւղ էր  
կլում, որ կարող են լսել։ — Ես ձեզ ճանաչում  
եմ։

— Դուք ինձ ճանաչում էք վախեցած  
կրկնեցի ես։

— Այս, ձեզ ասում են Անդրէսս Պար-  
կեր, բայց ձեր իսկական անունն է Առնոլդ Լի-  
թէլ, սրանից վեց տարի առաջ դատապարտած

էք տաժանակիր աշխատանքից Տեսնում եմ, որ  
վախենում էք։

«Ես իրօք սարսափահար էի եղել, կարծես  
կայծակ խփեց իմ գլխին. այսքան տարի գեռ  
ինձ ոչ ոք չէր ճանաչել. երբ ես այսպէս հա-  
րստացած դառնում էի հայրենիք, դժբախտու-  
թիւնը, ինձ թւաց, նորից փաթաթւում, էր ոտ-  
քերիս։

— Մի վախենաք, ես գիտեմ, որ դուք մե-  
ղաւոր չէք այդ գործի մէջ։ Լաւ նայեցէք ինձ,  
պէտք է, որ ճանաչէք։

«Ուշիուշով նայեցի հիւանդի դէմքին լամ-  
պերի աղօտ լոյսի տակ. կարծես ծանօթ դէմք  
էր, բայց չէի կարող լիշել, թէ որտեղ եմ տե-  
սել և ով է նա։

«— Ես Վիկտոր Ալբրեխտն եմ. լիշտում էք  
այն անիծւած գիշերը, որ միասին թուղթ էինք  
խաղում։ Նոյն գիշերը ես սպանեցի Լիւստու-  
նին և ոչ թէ դուք. թէ ինչու և ինչպէս, համ-  
բերեցէք պատմեմ։

«Նա սկսեց հազար ու հեալ, և խօսում էր  
մեծ դժւարութեամբ։

— Ես բանկերից մէկում գանձապահի պաշ-  
տօն ունէի, շարունակեց Ալբրեխտը. վայելում  
էի բանկիրների կատարեալ վստահութիւնը և  
խոշոր գումարներ կային իմ կարգադրութեան  
տակ։

«Պատահական մի սխալ հաշիւ ձգեց ինձ  
կորստեան գիրկը. բանկը իմ պատճառով վնաս

կրեց, թէև վասը համեմատաբար այնքան էլ մեծ չէր. ես միջոց չունէի բանկի վասը ծածկելու: Ակամայ այն միտքը ծագեց, թէ եթէ խաղամ, կարող եմ տանել, կըծածկեմ բանկին իմ հասցրած վասը, ապա նորից կըսկսեմ իմ մաքուր կեանքը:

«Խաղի համար, հասկանալի է, պէտք է օգտաէի դարձեալ նոյն բանկի գանձարկղից, որին իմ անզգուշութիւնն արգէն որոշ վէրք էր հասցրել: Օրէցօր ես տարւում էի խաղի մէջ, բանկի գումարները իմ ձեռքով հալւում էին ու չքանում: Մի անգամ միայն ես տարայ խաղը. պակասում էր մի հարիւր ոռւբի, որ բանկի փողելը բոլորը լրացնէի: Այդ ժամանակ պատահեցի ձեզ: Դուք և կիւտունը բորբոքւած խաղեր էիք կազմակերպում. չգրաւել չէր կարելի: Մի շաբաթւայ ընթացքում դարձեալ տարւեցի բոլորը:

«Որպէսզի միանգամից ուղղեմ գործս՝ բանկից վերցրի այս անգամ տասը հազար ոռւբի. Երեակայեցէք, այնքան հաւատարմութիւն ունէի, որ ոչ ոք ոչինչ չէր նկատում: Այդ գումարով խաղակոիւ սկսեցի կիւտունի հետ. յիշում էի այն վերջին չարախնդաց գիշերը:

«Երկու ժամւայ մէջ ինձ մօտ մնաց միայն հարիւր ոռւբի: Վճռեցի ինքնասպանութիւն գործել. բայց յետոյ... յետոյ չարութիւնը բորբոքւեց իմ սրտում. չէ որ կիւտունը պլոկեց ինձ այդ հակայ գումարը նա տարաւ: Կատարեալ

գժւած էի: Նոյն գիշերը որոշեցի մտնել կիւտունի մօտ, պատմել նրան, որ այդ փողերը իմը չեն, այլ բանկից ծածուկ վերցրած, յայտնել, որ ունեմ ընտանիք, երեխաներ, որ ինձ դատ ու բանտ են սպառնում, պատմել ու աղաչել, որ փողերը յետ տայ:

«Եկայ ձեր սենեակի դուռը բաղիսեցի, ձայն չլուեց. պատահաբար հրեցի դուռը, որը բացւեց և ես ներս մտայ: Տեսայ ձեզ կիթէլ, դուք հարբած էիք և թունդ խոըմփում, ոչ մի աղմուկ ձեզ չէր կարող զարթեցնել:

«Կիւտունն էլ խորը քնած էր: Արիւնը թուաւ գլուխս, աչքերս մթնեցին. մօտեցայ նըրան և գրպանի դանակով սկսեցի անվերջ հարւածներ տալ: Կարծեմ հէնց առաջին հարւածով սպանեցի նրան, բայց խելագարւած շարունակ ժակծկում ու կտրտում էի նրան...

«Ապա քիչ ուշքի եկայ, սեղանի վրայից վերցրի բոլոր փողը, այդ օտարի, անիծւած փողն ու դուրս եկայ: Էլ ինչ պատմեմ, փողը թաղեցի պարտիզում, զարձայ իմ սենեակը:

«Առաւոտեան հիւրանոցը իրարանցման մէջ էր. ծառաներն այլայլած էին. կիւտունը սպանւած էր. դուք փախել էիք: Ինձ վրայ ոչ մի կասկած չտարան, որովհետև ոչ ոք ոչինչ չէր տեսել:

«Ես փողը մտցրի բանկը, ինչպէս վերցրել էի, թողի թղթախաղը և սկսեցի իմ սովորական աշխատանքը:

«Բայց բախտը ձեր փոխարէն ինձնից վրէժ լուծեց. որդիս խեղդւեց ջրի մէջ. աղջիկս ըսպանւեց վիրահատի դանակով. վշտից կինս խելագարւեց: Ես էլ սկսեցի հիւծւել ու մաշւել, կարծես թունաւորւած լինէի. զիշեր ցերեկ դադար չէի առնում, հանգիստ չունէի, չըգիտէի, ինչ է քունը. Լիւստունի սաւերը հալածում էր ինձ. չէի կարողանում գտնել մի անկիւն, որ նա չհետեւէր ինձ, ուր ես մոռացութեան տըրւէի: Թողեցի ծառայութիւնս ու սկսեցի երկրից երկիր թափառել:

«Գիտէք ինչու:

«Զեզ էի փնտուում, լիթէլ! լսել էի, որ գտնուում էիք Աֆրիկայում, գիտէի, որ կեղծ անունով էք ապրում: Ուզում էի գտնել ձեզ և զղալ: Ուզում էի հարցնել, թէ ինչպէս պէտք է վարւիք ինձ հետ: Եթէ ցանկայիք, ես գնդակահար կանէի ինձ ձեր աչքերի առաջ, որ մահով կարողանայի մաքրել իմ դաժան յանցանքը:

«Եթէ ցանկանայիք, որ ես դիմէի իշխանութեան և խոստովանէի ամենը, կը կատարէի...

«Վերջապէս գտայ Զեզ:

«Նա լոեց. մի քանի ըոպէից յետոյ խընդրեց, որ ես օգնեմ նրան նաւասենեակը գնալու:

«Կատ եմ զգում ինձ, թուլացայ: Աղմուկ մի հանէք, ասաց նա, վաղը ամեն բան կանեմ. այս, ամեն բան կանեմ:

«Նա կատարեց իր խօսքը. միւս օրը տեսակցեց նաւապետի հետ. պատմեց նրան ամե-

նը, նոյնը կրկնեց չորս վկաների, այն է Գասպարի, նաւապետի, քարոզիչ Մարկվարտի և մի ուրիշի ներկայութեամբ, խնդրեց զրի առնել և թուղթը իր ու չորս վկաների ստորագրութեամբ ինձ յանձնեց:

«Այդպիսով իմ անմեղութեան իսկական փաստաթուղթը ձեռքս ընկաւ: Փրկւած էր իմ պատիւլ. ազատ կարող էի հայրենիք վերադառնալ: Ուրախութեանս չափ չկար:

«Բախտի անիւն էլի շուռ եկաւ: Ծովում փոթորիկ բարձրացաւ, որի առաջին զո՞ն եղաւ թշւառ Ալբրեխտը, որի թուլ կազմւածքը չէր կարող տանել հախուռն տարերքի կատաղի կոփւը:

Փաթաթեցին նրա մարմինը կտաւով և ձգեցին ջուրը.

Մեր վիճակն էլ լուսաւոր չէր. նաւը ջարդ ու փշուր էր լինում գո՞ո ալիքներից և արդէն մի քանի մասեր կորցրել էր:

«Հասաւ ժամը, երբ նաւի վրայ վտանգաւոր էր մնալ: Նաւապետը կարգադրեց թողնել շոգենաւը և անցնել մակոյկները, որ գուցէ կարողանան մի կերպ ափ հասնել. բայց չվերցնել իրենց հետ ոչ մի իր, նոյն իսկ ջուր:

«Ես ստիպւած եղայ յայտնելու նրան մեր գաղտնիքը, մեր հարստութեան մասին, որ տանում էինք հետներս: Նա չզիջեց արկղները մակոյկ տանել. բարկացաւ, ասելով, որ իր ծառայողների կեանքը չի փոխի ամբողջ երկրագնդի հարստութեան հետ:

«Բաժանւել այդ անթիւ գանձից շատ դըժւար էր իմ և Գասպարի համար: Զգիտեմ ինչ քամի էր սր փչեց խելքներիս, և մենք վճռեցինք մնալ շոգենաւում: Նրանք գնացին մակոյկներով: Մենք կանգնած նաւի կողքին՝ դիտում էինք, թէ ինչպէս մակոյկները տաշեղի նման ծփում էին ծովի ալեծածան մակերևոյթին: Վերջապէս կորած մեր աչքից... Իսկ շոգենաւը կամաց կամաց թեքւում էր ու օրօրւում: Անցաւ բաւական ժամանակ, նա զնում էր հոսանքի հետ, բայց չէր սուզում: Թէ ինչ էր պատճառը, չէինք հասկանում: Կարելի էր ենթադրել, որ անցքերը մի կերպ փակւել էին նաւի խորքում և այնտեղի օդը պահում էր ջրի երեսին:

«Այդպիսով շոգենաւը մօտ վաթսուն օր մնաց ջրի երեսին և գնում էր հոսանքի ընթացքով: Մենք ոչ մի բանի կարիք չունէինք. թէ ջուրը և թէ ուտելիքը առատ էր նաւում:

«Վաթսուներկուերորդ օրը հասանք մի կղզու, ես հաշւեցի, որ մի քանի վերստ հեռու ենք Աւստրալիայի արևմտեան ափից. այդ փոքրիկ կղզին չէր նշանակւած քարաէզի վրայ, որ կախած էր նաւապետի սենեակի պատից:

«Միւս օրը Օրօնդէսը նստաւ ծանծաղուկ աւագի վրայ. պէտք էր ուրեմն նաւը թողնել և մի կերպ ափ հասնել: Նաւի տախտակներից մի կերպ կապկակելով շինեցինք լաստ, արկդները դրինք լաստի վրայ ու դիմեցինք դէպի ափ:

«Երկար չգնացինք, ալիքը խփեց լաստը մի

քարի: Լաստը երկու մասի բաժանւեց. ես մի արկղի հետ մնացի լաստի մի կտորի վրայ, և երբ նայեցի Գասպարին, տեսայ նա իր արկղի հետ սուզում էր ջրի մէջ:

«Ազատիր, խեղդւում եմ,—կանչում էր նա: Ես ինչպէս կարող էի նրան ազատել: Մինչև լաստը դարձրի դէպի նրա կողմը, նա անյայտացաւ ջրի տակ. Երկար պտոյա էի գալիս այնտեղ իմ շուրջը, ուր Գասպարը կուլ գնաց: Վերջապէս վհատ սրաով շարունակեցի թիվարեկ դէպի առաջ:

«Թէ որքան գնացի, չգիտեմ. կատաղի ամերը ինձ էլ բռնեց. սկսեց կեանքի և մահու կոփւը. վերջապէս ուշը գնաց... Երբ ուշը եկայ, տեսայ, որ ընկած եմ ծովափի աւազի վըրայ. ինձնից քիչ հեռու կիսաթաղ աւազի մէջ ցոլում էր արկղը:

«Կղզին զուրկ էր համարեա բուսականութիւնից. Ժայռերի կոյտ էր ներկայացնում. ապրել այդ տեղ երկար չէր կարելի: Հեռանալ կարելի էր միայն լաստով, քանի որ ուրիշ միջոց չկար: Կացինս, որ միշտ պահում էի գոտումս, ազատել էր ինձ հետ: Եղած մացառուտներից մէկ լաստ շինեցի:

«Մնում էր արկղի հարցը. Ես չէի ափսոսում նրա միջի գանձի համար, ցաւն այն էր, որ այնտեղ էի գրել Ալբրեխտի խոստովանութիւնը և նաւապետի կազմած արձանագրութիւնը Ալբրեխտի մահւան մասին, իմ անմեղութեան

փաստաթղթերը: Բանալին փոթորկի ժամանակ  
կորցրել էի: Կացնով ու քարով որքան խփեցի՝  
արկղը, որ պողպատից էր, ջարդել չկարողացայ:  
Անձարացած մի քարանձաւում բաւական խոր  
փոս փորեցի, արկղը թողեցի այնտեղ. քարան-  
ձաւի պատի վրայ, որպէս նշան, նկարեցի կա-  
ցին:

«Ապա լաստ նստելով զիմեցի գէպի եւրո-  
պա: Այժմ գիտես, իմ անգին որդի, թէ ինչպէս  
եմ ապրում. կեզծ անւան տակ պահում եմ իմ  
գոյութիւնը:

«Դու իրաւամբ կը հարցնես, թէ ի՞նչու չը-  
գնացի գանծի և, որ զլսաւորն է, իմ փաստա/  
թղթերի յետեկց. փողի, ինչպէս տեսնում ես,  
կարիք չունէի և չունիմ. բայց որքան անհրա-  
ժեշտ են այն թղթերը...»

«Պատասխանեմ քեզ. այն ամենը, այն բո-  
լոր անցքերը, որ եկան ու անցան իմ զլսով՝  
մեռցին եռանդս, քայլայեցին առողջութիւնս:  
Ես թուլացել, ուժասպառ էի եղել, գարձել երե-  
խայ: Ես կատարեալ ջարդւած էի:

«Լաւ գիտակցում էի, էլի նման մի գէպք,  
մի արկած, իմ ուղեղը կը գաղարէր գործելուց:  
Ես կանգնած էի խելագարութեան շէմքին:

«Իմ կազմւածքը պահանջում էր անուն  
հանգստութիւն, կատարեալ բժշկութիւն:

«Եորից սկսել թափառումների շը ջանը, նա-  
ևլ կատաղի ովկիանոսի վրայ, տանել զանազան  
կը կըների գաժան կլիմաները, ենթարկւել հա-

պար ու մի զրկանքի, ոհ, վեր էր իմ ուժից:  
Վախում էի, որ կը մեռնեմ, չկատարած մտա-  
ծածում, դատապարտութեան անարգանքի ու բի-  
ծը յաւէտ կը մար իմ անւան վրայ, վերեզման  
կիջնէի որպէս տաժանակիր յանցաւոր:

«Հայրենիք գալով ես մտածեցի պատրաս-  
տել այդ մեծ ծրագիրը, որ դու զլուխ բերես: Դու  
զեռ փոքր էիր, 11 տարեկան երեխայ: Այդ հա-  
սումում անօգուտ կը լինէր լցնել քո զլուխը  
պատմւածքներով, առասպելական հարստութիւն-  
ների մասին. դու չէիր հասկանայ ինձ:

«Ես սպասում էի, որ դու մեծանայիր: Մը-  
տագիր էի ամբողջ զաղանիքը բաց անել քո ա-  
ռաջ, երբ հասակդ կառնէիր: Այդուհետ ձգձգում  
էի օրէցօր, վախենում էի ասել:

«Այդ գանգաղկոտութեան համար այս ծա-  
նըր պատիմն եմ կրում. գաղանիքը բացւեց ա-  
ռանց իմ զիտութեան, որի մի մասն արդէն ի-  
մացել ես ուրիշներից:

«Այժմ այս է իմ կտակը քեզ, գնու Աւո-  
արակիա, կը գտնես այն կղզին, որ ուկացյիները  
Յօնամբիք անունն են տալիս. ընկած է այն 113<sup>0</sup>  
երկարութեան և 24<sup>0</sup> լայնութեան վրայ: Ծովա-  
փից մօտ հարիւր քայլ հեռու ամենամեծ նու-  
ւահանգստի զիմաց գանում է այն բարայրը,  
ուր թաղել եմ արկղը: Քարայրի մուաքի վրա-  
յից կախւած ժայռի մոխրագոյն երեսը խճըլ-  
ւած է ու գծերով, որ կարծես աղաւազւած զը-  
րութիւն լինի: Քարայրի բնորոշ կողմն այն է,

որ նա ձգւում է արևմուտքից արևելք. ներսի  
պատի վրայ, ինչպէս ասացի, նկարել եմ կա-  
ցին:

«Աւելացնեմ և այն, որ Աֆրիկայից հեռա-  
նալիս մի քանի անգին քարեր կարեցի գօտուս  
մէջ, որից երբէք չեմ բաժանւել։ Այդ քարերը  
ծախելով հասայ հայրենիք։ Դրանցից մի քանի-  
սը մնաց մօտա։ Մաքուր ոսկուց լուսանկարի  
շրջանակ շինել տւի մօրդ պատկերի համար և  
շրջանակը զարդարեցի այդ բրիլիանտներով, սու-  
տակներով ու տպազլիոններով։ Ուխտ եմ գնում  
քեզ վրայ. երբէք չբաժանւես այդ, ինձ համար  
նվիրական մասունքից։»

«Ես քեզ թողնում եմ բաւական մեծ կա-  
րողութիւն, իմ անգին զաւակ, միակ ժառանգս,  
որ կըքաւէ քեզ թէ լայն ապրելու և թէ գլուխ  
քերելու իմ կատակը։ Իրօք հարկաւոր չէր գնալ  
այն գանձի յետեկից, առանց այն միլիոնների էլ  
դու կարսու ես լաւ ապրել։ Այդ միլիոնները  
բախտաւորութիւն չեն բերէ. բայց թղթերը  
թղթերը…»

«Եթէ ես անձամբ չկարողացայ, իմ ընկեր  
և հաւատարմատար, նօտարիուս Ռուբբինքը կը  
յանձնէ քեզ այս կատակը. այդ կըլինի նշան, որ  
ես կամ մեռել եմ, կամ կենդանի, բայց… բայց  
թագւած եմ աքսորանքի մէջ։»

«Աբա, վարւիր, ինչպէս քո խիղճը կըթե-  
լադրէ քեզ։ Թող երկինքն օրհնէ քեզ, իմ ուղի,  
ամէն»։

V.

Այդ օրից անցել էր արդէն կէս տարի, երբ  
Տուլոս Մարկոսը ձեռնարկեց հօր կտակը գլուխ  
քերելու։ Մինչ այդ նա ի հարկէ երկու անգամ  
գնացել էր հօրը տեսնելու, որ բանտի մէջ ան-  
պարտ տառապում էր։

Գործի յաջողութեան համար նա իր հետ  
վերցրեց Աւստրալիայի կեանքին ու պայման-  
ներին քաջ ծանօթ մարդկանց, հմուտ նաւա-  
վարներ։

Մի խօսքով, ոչինչ չէր խնայել, ոչ փող և  
ոչ անձնական եռանդ, գործի յաջող ելքի հա-  
մար։


Բայց կարծես, բախտին հաճելի չէր, որ  
Լիթէլի ընտանիքը հեշտութեամբ կարողանայ  
դժբախտութիւններից շունչ քաշէ, որ արդարու-  
թիւնը շուտով երեան գայ։ Ճանապարհին ֆրան-  
սիական այն նաւը, որով գնում էր Տուլոսը իր  
մարդկանցով Աւստրալիա, Լամանշ նեղուցում  
ընդհարւեց անգլիական զրահակիր նաւին ու  
խորտակւեց։ Ճանապարհորդների կէս մասը զո՞ն  
գնաց այդ չարաբախտ դէպքին։ Խեղդւածների  
մէջն էին և Տուլոսի հմուտ նաւափարները։

Դա մեծ կորուստ էր Տուլոսի համար։ Նա  
մեծ դժբախտութեամբ, յայտարարութիւնների մի-  
ջոցով էր կարողացել այդ մարդկանց ճարել, ո-  
րոնք իրենց հմտութեան հետ միացրել էին և

աղնիւ գծեր, որ կարենոր էր այդպիսի ձեռնարկութեան համար:

Այդ կերպ հէնց սկզբում իզուր անցաւ առաջին փորձը: Տուլոսը վերակարձաւ Լոնդոն: Նա չընկճւեց. երկար խորհրդակցելուց ու ծրագրելուց յետոյ նօտարիուս Ռաբբինդի հետ, նա սկսեց երկրորդ ճանապարհորդութիւնը:

Այս անգամ հետը ոչ ոքի չվերցրեց, բացի Թօթի ծառայից ու Յարուշ շնից: Յոյս ունէր, եթէ համնէր Աւստրալիա, այնտեղ գտնել ու վարձել այդ երկրի պայմաններին ծանօթ և կըդզիներն իմացող մարդկանց. Բախտախնդիր ու չարագործ մարդկանց յարձակումներից ազատ մնալու համար նա ճանապարհին իրեն հանքաբան գիտնական հրատարակեց, որ գիտական նպատակով գնում է Աւստրալիա Լոնդոնի թանգարանի համար հանքային ժողովածու կազմելու:

Այդ նպատակով հետը վերցրել էր հարկաւոր գործիքներ ու իրեր և ճանապարհին մարդկանց աչքերին փոշի փշելու համար հաւաքում էր զանազան քարեր, գրում գրանց վրայ, դարսում արկղիկների մէջ և յետոյ, ի հարկէ, ծածուկ դէն շպրտում:

Թէև այդպէս զգոյշ էր Տուլոսը, բայց չըկարողացաւ ազատ մնալ երկու չար աշխից, որոնք Աւստրալիայում հետեւում էին նըան: Այդ երկու չարագործներն ու բախտախնդիր սրիկաները Տուլոսին նկատեցին հէնց

այն բոպէին, երբ սա առաջին անգամ դուրս եկաւ նաւից և ոտք դրեց Աւստրալիայի ցամաքի վրայ:

Դրանցից մէկի անունն էր Սամփսոն, միւսինը՝ Լօթի: Զարագործութեան, արկածախնդիր ձեռնարկութեան, խարեբայութեան, ամեն կարգի գողութեան ձև ու չափ չկար, որ սրանք կատարած չկնէին: Գիտէին հազնւել, շարժւել ու վարւել, խօսել ու պատմել ամեն դասակարգի տարագով, ձեռվ ու բարբառով, ամեն ազգի լեզով ու մասծելակերպով:

Սամփսոնը տարբերում էր Լօթիից իր սուր մտքով, վառ երևակայութեամբ, արագ ըմբռնումով: Լօթին գերազանցում էր իր ճարպիկութեամբ: Առաջինը ստեղծագործող, յօրինող ոյժ էր, ձեռնարկող ողի, երկրորդը կատարող, գործադրող ձեռք: Մէկը լրացնում էր միւսին, և մի կատարեալ, գերազանց բացասական ամբողջութիւն կազմում:

Սրանք Տուլոսին մի քանի տեղ հետևելուց յետոյ, վերջապէս յաջողացրին մի հիւրանցում խօսակցութեան բնաւել նրա հետ: Այդ տեղ ամեն կրակից ու ջրից անցած սրիկաները թափ տվին Տուլոսին, իմացան նրա նպատակը, թէև Տուլոսը աշխատում էր շատ զգոյշ լինել և որոշ կերպով չասաց իր գիտաւորութիւնը: Սամփսոնը, որ գիտէր մարդկանց հէնց առաջին խօսքից հասկանալ, այն պարզ գաղափարը կազմեց, որ Տուլոսը ոչ գիտնական է և ոչ գիտական նպա-

տակ ունի և ոչ էլ նկարչական, գեղագիտական սիրուց է մզւել դէպի Աւստրալիա։ Տուլլոսը նրա աշքում համարւեց մի մարդ, որը ունի բաւական մեծ կարողութիւն, այդ մասին Սամփսոնը բանկերից էր տեղեկութիւնը հաւաքել, և այժմ ճանապարհորդութիւն է կատարում նոր գանձեր գտնելու, էլ աւելի հարստանալու։ հէնց իրենց փնտռած մարդն էր, որին կողոպտել իրենց սուրբ պարտքն էին համարում։

Դրանց խօսակցութիւնը յանգեց այն բանին, որ Տուլլոսը այդ երկու սրիկային, որոնք պէտք է ասել, այդ օրը հագնւել էին նուրբ ջենտլմենի տարագ ու պահում էին իրենց վերին աստիճանի բարեկիրթ, ընդունեց որպէս բարեյոյս ու անվաս մարդ։ Պայմանաւորւեցին, որ Տուլլոսը մի նաւ վարձէ կամ առնի, իսկ իրենք, որպէս տեղացիներ և հմուտ նաւավարներ, դեկավարեն նաւն ու սկսեն Աւստրալիայի կղզիները շըջագայել։

Տուլլոսը յանձնեց Սամփսոնին նաւ վարձել և շուտով ուղևորւել։ Աւստրալիայում մալայցիները յայտնի են որպէս յանդուգն ու անվախ նաւաստիներ։ Սամփսոնը, որի սիրոը թրթում էր այդ բանի համար, միւս օրը վարձեց «Թասմանիա» նաւը, 23 մալայցի ու ճանապարհ ընկան։

Ճանապարհին Տուլլոսն աշխատում էր, որ իր նպատակը բոլորովին գաղտնի մնայ. նա դիտամբ ուղղակի չէր դիմում իր բաղձանքի ա-

ուրկայ կղզին, այլ ծովում էր ճանապարհը, ամեն տեղ իջնում, քարեր ու հողեր հաւաքում։ Բայց իզուր։ Սամփսոնն ու Լօթին հետևում էին նրա ամեն մի քայլին, պարզ տեսնում էին, որ նա փոշի է փչում ուրիշի աշքերին։ Նրանք Տուլլոսից գաղտնի մի գիշեր մտան նաւի ներքին սենեակը, ուր նա պահում էր իր հանքերի արկղիկները, բաց արին ժողովածուն ու տեսան, որ բոլոր նշաններն ու գրութիւնները չէին համապատասխանում ամանների բովանդակութեան։ Այն ամանը, որի վրայ գրւած էր դեղին աւազ, պարունակում էր կաւ. կամ հողով ամանի վրայ գրւած էր, օրինակ, չեչ քար և այլն։

Այս ամենը պարզ ցոյց էր տալիս, որ Տուլլոսը այլ նպատակ ունէր։ Իսկ մեր չարագործները նրան բացառապէս ոսկի փնտրող էին համարում։

Կար մէկը Տուլլոսի հաւատարիմերի մէջ, որ զգացել էր, թէ Սամփսոնն ու Լօթին կասկածելի մարդիկ են։ Պա Տուլլոսի հաւատարիմ ծառայ թօրին էր։ Թօրին՝ գեռ առաջին անգամ հանդիպելիս այդ մարդկանց՝ այն տպաւորութիւնն ստացայ, որ դրանցից մաքուր հոտ չի փչում։ Թօրիի, այդ պատանի արարի մաքուր սիրան ու թարմ միտքը յստակ հայելու նման իրենց մէջ անդրագարձրին այդ դե արարածները սկ հոգիները։ Այդ մասին նա ասել էր Տուլլոսին, բայց սա ուշագրութեան չէր առել։

Այժմ թօրին նաւի մէջ մի ճշգրիտ նախա-

զգացումով հետևում էր նրանց: Բայց մի անգամ բռնւեց, երբ ծածուկ ականջ էր դնում նրանց խօսակցութեանը: Սամփսոնը կատաղութիւնից գրկեց նրան և ուզում էր ծովը ձգել. Լօթին արգելք եղաւ և ականջին փսփսալով համոզեց նրան բաց թողնել, մանաւանդ որ Թօթին առանձին բան չէր լսել:

Երբ Թօթին աիրոջ սենեակը մտնելով՝ պատմում էր այդ գէպքի մասին և գանգատում, Սամփսոնն ու Լօթին էլ վազեցին կողքի սենեակը ականջ դնելու նրանց, Սամփսոնը վազուց արդէն գաղտնի անցքեր էր բացել այդ երկու սենեակների կից պատի մէջ ու միշտ հետեւում ու լսում էր Տուլլոսին: Այս անգամ նա լսեց մի ինչ որ թղթի և Ոսկէ Կուռքի գանձի մասին: Նրա երկայութիւնը լրացրեց պակասը:

Սամփսոնը, այդ հիւանդու բորբոքւած երկայութիւնը այն հաստատ համոզումը կազմեց, թէ Տուլլոսը գիտէ պատրաստի գանձի տեղ, թէ այդ մասին նա ունեցել է նոյնիսկ գրութիւն, որը կամ կորցրել է կամ մոռացել և տանը թողել. բայց լաւ յիշում է գանձի տեղը:

Սամփսոնը, որ չգիտէր միջոցների մէջ խորութիւն դնել, միայն թէ հասնի նպատակին, մտածեց ճիւաղային մի ծրագիր. տանջանքով դուրս խլել Տուլլոսից գաղտնիքը:

Լօթին ու Սամփսոնը այդ գիշեր չքնեցին, մի քէ սարքեցին նաւասալիների, մալայցիների հետ. նրանց փող բաժանեցին ու կաշուեցին և

նրանց միջոցով կալանաւորեցին Տուլլոսին ու նրա ծառային, Թօթիին:

Զեռքերն ու ոտքերը կապած՝ ընկած էր Տուլլոսը տախտակամածի վրայ: Սամփսոնի նրամանի համաձայն հարւածներ էր, որ անմիտ մալայցիները հացնում էին նրա մարմարին: Երբեմն Սամփսոնը մօտենում էր Տուլլոսին ու հարցնում, թէ կասէ արդեօք նա գանձի տեղը՝ ստանալով բացասական պատասխան, Սամփսոնը հրամայում էր նորից ու նորից ծեծել և չարչարել Տուլլոսին: Սա այն աստիճան արդէն ջարդել էր ու վիրաւորւել, որ կազանքներից ազատ էլ լինէր, չէր կարող վեր կենալ. ողջ մարմինը ծածկւել էր ալ արիւնով:

Սամփսոնն անճարացած վերջին փորձն արաւ. սա ծեծի ենթարկեց նոյպէս կապկապած Թօթիին Տուլլոսի ներկայութեամբ: Բարեկիրթ ու բարեխիղճ Տուլլոսը, այդ վերին աստիճանի մաքուր հոգին, չէր կարող թոյլ տալ, որ իր համար մի ուրիշը տանջւի: Երբ նա լսեց Թօթիի աղիողորմ հեծկլացն ու անքոցը վայրենի մաշայցիների երկաթ հարւածների տակ, մոռացած լայցիների երկաթ հարւածների տակ, մոռացած լայցիների արդար բարկութեամբ գուաց.

Գաղաններ, ի՞նչ էք ուզում այդ անմեղից. ազատեցէք նրան, կասեմ գանձի տեղը:

Եւ նա անճարացած պատմեց, որ ճիշտ է, մեծ առասպելական գանձի տեղ գիտէ, բայց ինքը դնում է ոչ այնքան այդ գանձի համար,

այլ մի փաստաթղթի, որ նրա մէջ է և որը նըր-  
բան շատ հարկաւոր է հօրը ազատելու բանափ  
շղթաներից, ուր նա անմեղ կենդանի թաղւած է:

Սամփոնը կարգագրեց Տուլլոսին ու Թօ-  
քիին ձեռքները կապած առանձին սենեակների  
մէջ պահեն ու հակեն, մինչև որ կըհասնեն ցան-  
կացած կղղին:

Բախտախնդիրներն այժմ հանգիստ էին և  
ծրագիրներ էին կազմում, թէ ինչպէս վարւեն  
և ինչպէս բաժանեն գանձը միմեանց մէջ: Նը-  
րանք մտադիր էին մալայցիներին կամ ոչինչ  
չտալ, կամ ամեն մէկին մէկ տասանոց բախշել:  
Տուլլոսին բաժին հանել մի տասերորդ մասը,  
բայց աւելի լաւ կըլինէր, որ ապագայ բարդու-  
թիւններից ազատ մնալու համար, նա երբէք  
գոյութիւն չունենար: Ի հարկէ, այդ ուխտեալ  
աւագակները իրենց թոյլ չէին տայ սպանել նը-  
րան. նրանք մեծահոգի էին... բայց ոչինչ չէր  
խանգարի, եթէ թողնէին մենակ անմարդաբնակ  
կղզում մեռնելու աստիճանաբար բնութեան գըր-  
կում: Սակայն մի հանգամանք ծառանում էր  
այդ մտքի առաջ. դիւային հոգին էլ երբեմն  
զիտէ ոչ թէ խղճալ, այլ հիանալ վեհ գործի,  
նւիրւած սրաի առաջ: Այդ հանգամանքը կեն-  
դանի թաղւած մարդու պատմութիւնն էր. ինչու  
թոյլ չտալ, որ անմեղը ազատւի իր տանջանքից,  
որի համար նրանք ոչինչ չէին կորցնում:

Բայց ինչ պիտի անէին այն երկու եւրո-  
պացիների հետ, որոնք վարձել էին նաւում, որ-

պէս հիւսն. արհեստաւորներ էին նրանք, նրանց  
պաշտօնն էր կարկատել նաւի այս կամ այն  
մասը, երբ կալիք լինէր: Նրանք կարող էին այդ  
աւագակներին ապագայում մատնել: Սամփոնի  
համարձակ միտքը չէր կարող կանգ առնել այդ  
չնչին արգելքի առաջ...

Նոյն գլուերը այդ երկու արհեստաւորների  
մարմինները կու գնացին ծովին:

Մինչ Սամփոնն ու Լօթին ծրագրում էին  
իրենց անելիքները, խրախուսւում ներկայ յա-  
ջողութիւններով ու հրճում ապագայ գանձի  
փայլքով, մալայցիների մէջ ևս առանձին շար-  
ժում էր տեղի ունենում: Նրանք տեսան ու-  
լսեցին, որ Տուլլոսին չարչարում էին Սամփո-  
նի կարգագրութեամբ մի ինչ որ գանձի համար:  
Լսել և զգացել էին նոյնպէս, որ այդ աւագակ-  
ները նրանց զրկելու են և գատարկածեն ճա-  
նապարհ ձգելու: Տեսան, որ Տուլլոսը որին  
տանջանքներով մահւան դուռն էին հասցըել,  
բայց չէին կարողացել գաղտնիքն իմանալ, մի-  
այն թօթի, այդ ստրուկի պատճառով համա-  
ճայնւեց իր ուխտը խախտել: Այդ ամենը, մա-  
նաւանդ վերջին հանգամանքը զգացնել տւեց  
այդ վայրենիներին, թէ Սամփոնն ու Լօթին  
անկուշտ գազաններ են, նոյնիսկ պատրաստ մի-  
մեանց զգելու, իսկ Տուլլոսը բարութեան վսեմ  
մարմնացումն ու անմեղ նահատակի:

Մալայցիները բաժանւել էին երկու մասի.  
մեծ մասը ուզում էր պաշտպանել Տուլլոսին,

շատ լաւ զգալով, որ նա իրենց կը վարձատրէ, ինչպէս հարկաւոր է. միւս մասը հաւատարիմ էր մնացել Սամփոսնին:

Մալադա մալայցին, որ Սամփոսնի կարգադրութեամբ հսկում էր կապւած Թօքիին, ծածուկ յայտնեց վերջինիս՝ մալայցիների մտադրութիւնը Տուլոսին ազատելու մասին և խնդրեց, որ գնայ այդ բանը յայնի տիրոջը, ինքը գիշերը կարձակէ նրա ձեռքերն ու ուղերը:

Գիշերը Մալադայի փոխարէն ուրիշին նշտակեցին Թօքիի վրայ հսկիչ: Երեկոյեան սկսել էր ծովում փոթոքիկը, որը գիշերն աւելի սաստկացաւ. նաւաստիներն աշխատում էին և մոռացել էին դաւադրութեան մասին: Առաւօտեան դաւադրութեան պայմանաժամից գեռ առաջ կատաղի կոխւ սկսեց մալայցիների մէջ: Պատճառն այն էր, որ Սամփոսնի կողմանկիցներից մէկը ապահակ էր խփել միւս կողմի մարդուն. սա էլ նրան դանակով վիրաւորել էր: Օխօտէն, յայտնի ծովահէն մալայցին, որ ձեռքի մի շարժումով երկու արհեստաւորներին ծովի էր ձգել, տեսնելով դանակը ընկերոջ ձեռքին՝ ատրճանակը բացեց նրա վրայ. գնդակը սակայն անցնելով նրա վրայով, սպանեց միւս ընկերոջը, որին պաշտպան կանգնեցին միւսները, և այսպիսով մալայցիները երկու խմբի բաժանւած սպանում էին միմիանց:

Այդ աղմուկից իր սենեակից գուրս թուռ

Սամփոսնը ատրճանակները ձեռքին, նա սկսեց աջ ու ձախ կրակել: Մալայցիների մէկին յաջողւեց կացնով խփել նրա գլխին. նա օրօրւելով վայր ընկաւ: Մալայցիները թափւեցին նրա գըլխին ու սկսեցին խեղդել:

Այդ պահին տախտակամած գուրս եկաւ և Լօթին. բայց նրան իսկոյն զինաթափ արին: Սա դիմեց Ցարուլ շանը, արձակեց նրա շղթան և բաց թողեց մալայցիների վրայ, որոնք սարսափահար յետ քաշւեցին:

Ցարուլը մի ոստիւնով թռաւ Սամփոսնի կրծքին և բռնեց նրա կոկորդից. նրա հետ իր գործը տեսնելուց յետոյ՝ Ցարուլը յարձակւեց Լօթիի վրայ, —որ սարսափից քար էր կտրել:

Մինչ այդ նաւը՝ անտէր մատնւած ծովի կատաղի ալիքներին՝ ջարդ ու փշուր էր լինում. սպանւած էին ղեկավարը, և ծառայողներից շատերը: Մնացել էին մի քանի մալայցիներ, որոնք տեսնելով, որ նաւը խորտակւում է, բաց թողին մակոյկները, նստելով նրանց վրայ դիմեցին դէպի ափ:

Նաւի վրայ մնացին Ցարուլը, Տուլոսը, որ պարանակապ բանտարկւած էր իր սենեակում և ոչինչ չգիտէր, թէ ինչ է կատարում և Թօքին:

Մինչ այդ Մալադան իր խօսքի համաձայն կուի ըոպէին ժամանակ գտնելով մտել էր Թօքիի մօտ և արձակել նրա կապերը. յայտնել էր, որ Թօքին գուրս չգայ սենեակից մինչև կոփւը էր վերջանայ:

Երբ ձայներն ու աղմուկները դադարեցին նաւի վրայ, Թօրին դուրս եկաւ տախտակամած, բայց բացի մի քանի դիակներից նաւի վրայ ոչ ոքի չգտաւ: Նաւը թեքւել էր և մօտ էր ծռվի յատակը գնալուն: Թօրին իսկոյն հասկացաւ վտանգը, վազեցի դէպի Տուլլոսի սենեակը. դուռը փակ էր: Նա գիտէր, որ բանալին Սամփոնի մօտ էր գտնուում. որի դիակը տեսել էր տախտակամածի վրայ, Վերադարձաւ այդ դիակի մօտ, գրպանից հանեց բանալին և բաց անելով դուռը, գոռաց.

— Տէր, նաւը խորտակւում է: —

Մինչ նրանք դուրս էին գալիս, նաւը սուզեց...

Անցաւ մի քանի վայրկեան. Ջրի երեսին ալիքների ուժեղ հարայ-հրոցի ժխորում լափին էին տալիս խորտակւած նաւի կտորները, մարդկանց դիակներ, տախտակներ, պարաններ և այլն: Այդ քաօս խառնւածքի միջից յանկարծ մի շան գլուխ բարձրացաւ. շունը լող էր տալիս և պահում իրեն ջրի երեսին. Նա մի պահ չորս կողմը նայեց. ապա լող տալով մօտեցաւ մի դիակի և օձիքից բարձրացնելով՝ սկսեց իր հետ տանել դէպի ափ:

Դա Յարուկն էր, որ ազատում էր ուշաթափ Տուլլոսին: Երբ ափ հասան, շունը վայր դրեց Տուլլոսին աւազի վրայ. ախուր նայում էր նրան և երբեմ, երբեմ կտրուկ-կտրուկ հաջում, կարծես, ուզում էր զարթնացնել:

Յիբաւի Տուլլոսը ուշըի եկաւ և գտաւ իր մօտ միայն Յարուկին: յիշեց անցածը և հասկացաւ, որ Յարուկն է իրեն ազատել: Նա յիշեց իսկոյն Թօրիին:

«Ի՞նչ եղաւ Թօրին, ուր է նա», դիմեց նա Յարուկին, շունն անշուշտ չէր կարող նրան պատասխան տալ: Նա քիչ հանգստանալուց և շունչ քաշելուց յետոյ, վեր կացաւ և սկսեց ծովի ավին շրջել:

Տեսաւ այդտեղ իր նաւի մարդկանց դիակները. Սամփոնի և Լօթիի դիակների վրայ տեղ չկար, որ սպի չունենար, հին վերք չլինէր. որոնք անցեալ բազմաթիւ ու բազմասեւ արկածների անջնջնելի կնիքն էին ցուցադրում: Դիակների մէջ չկար Թօրին:

Մի քանի քայլ գեռ առաջ չէին գնացել, երբ Յարուկն ուրախ հաջոցով առաջ վազեց, անցաւ սարի յետելը, ուր գտաւ Թօրիին, թուաւ նրա վրայ և գետին ձգեց թուլացած պատանուն: Ապա միմիանց վազաքշելով Թօրին ու Յարուկը եկան Տուլլոսի դէմ:

VI.

Այդ օրից անցել էր ուղիղ երկու տարի, երբ Բօխամբիք կղզուն մօտեցաւ մի փոքրիկ նաւ, ուր թաղւած էր Ռոկէ կուռքի գանձը: Դա Տուլլոսն էր: Նա Սամփոնի և Լօթիի ձեռքից ազատելուց յետոյ Աւստրալիայում գերի էր ընկել տեղացիների ձեռքը:

Նրան այնտեղ գտել և գերութիւնից ազատել էր քարոզիչ Մարկվարտը, որը, ինչպէս գիտենք ազատել էր «Օրօնդէս» նաւի խորտակման ժամանակ, Այժմ որպէս քաջ ծանօթ տեղային պայմաններին և Անդրէաս Պարկերի կեանքին, չէր կարող չօգնել նրա որդուն, Տուլլոսին, ձեռք բերելու հարկաւոր փաստաթղթերը։ Նա էր առաջնորդում Տուլլոսին դէպի այդ կողին։

Տուլլոսին վերջապէս յաջողւեց գտնել ոսկէ կուռքի գանձը փաստաթղթերով միասին և ողջ առողջ վերափառնալով հայրենիք ծերունի քարոզիչ Մարկվարտի և իր անօրինակելի հաւատարիմ ու անբաժան ընկերների՝ Թօրիի և Յաբուլ շան հետ միասին։

Դատարանը կրկին քննեց Անդրէաս Պարկերի կամ Առնոլդ Լիթէլի գործը և կենդանի վկայ Մարկվարտի ու անհերքելի փաստաթղթի հիման վրայ արդարացրեց Լիթէլին։

Տուլլոսը կրկին գտաւ իր Հերօին, որին վառ կարօտով գիշեր ցերեկ յիշում էր։

Մեծ էր և միստեր Ստօի ուրախութիւնը, որ վերջապէս Տուլլոսի նման փեսայ ունեցաւ։

Որդին կատարեց լիովին իր բնական պարտքը... ինչքան քաջութիւն, ինչքան հերոսութիւն, ինչքան հնարագիտութիւն, փառք ու պարձանք։



Հայոց Թժ. Ա. ԹՈՒԳՈՒՏՎԵՑԱՆԻ  
Հայ ապագաւորին ՀՕՕ և առաջի գիւղը 15 ՊԾԱՄԻԱԿ  
յօրելիսնի լիւատակին

Ա 1. Կորած Սարը եւ  
Ռոկէ Կոտքի զանձը . . . . . 20 կ.

Թամուշի առկ է .

Ա 2. Փորքիկ սրատմածքներ:

Գինն է 20 կ.